INECOBANK

inecobank.am
010510510

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ

ԲԱՆԿԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 3
2. Բանկային հաշիվներ 14
3. Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով 20
4. Բանկային քարտեր 25
5. Բանկային ավանդներ 30
6. Գաղտնիություն 34
7. Կողմերի պատասխանատվությունը 37
8. Այլ պայմաններ 40
Հավելված 1 42
ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ 42
Հավելված 2 46
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 46

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ստորև սահմանված Բանկային սպասարկման հիմնական պայմանները (այսուհետ՝ Հիմնական պայմաններ), Բանկի սակագների, ինչպես նաև Բանկի կողմից հաստատված դիմումների, ուղեցույցների և այլ տիպային փաստաթղթերի հետ միասին կարգավորում են «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող բանկային հաշիվների, ավանդների, քարտերի, հեռակառավարման համակարգերի և այլ ծառայություններից օգտվելու կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև պայմանագրային հարաբերությունները: Հիմնական պայմաններում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

«Բանկ» - «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն, վերջինիս մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

«Հաճախորդ» - Բանկի ծառայություններից օգտվող ֆիզիկական կամ իրավաբանական անձ (ներառյալ՝ իրավաբանական անձի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտներ, ովքեր իրավունք ունեն օգտվել Բանկի ծառայություններից):

«Կողմ» - Բանկը կամ Հաճախորդը:

«Կողմեր» - Բանկը և Հաճախորդը միասին:

«Սակագներ» - Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների դիմաց գանձվող վճարները կամ առանձին գործառնությունների համար վճարվող տոկոսների չափը, ժամկետները և այլ ֆինանսական պայմանները սահմանող փաստաթուղթ, որը պարբերաբար հաստատվում է Բանկի իրավասու մարմնի կողմից և կազմում է Հիմնական պայմանների անբաժանելի մասը: Սակագները ներառում են նաև ծառայությունների փաթեթների

կամ խմբերի համար հատուկ ֆինանսական և այլ պայմանները սահմանող սակագնային փաթեթները (պլանները):

«Հաշիվ» - Բանկի կողմից առաջարկվող ընթացիկ, քարտային, խնայողական, մետաղական, ավանդային և ՀՀ օրենսդրության իմաստով բանկային հաշիվ համարվող այլ հաշիվներ, ներառյալ՝ կիրառելիության դեպքում՝ հատուկ հաշիվները:

«Հայտ», «Դիմում» կամ «Դիմում/Պայմանագիր» - Հաճախորդի կողմից ստորագրված և Բանկի կողմից սահմանված ձևի փաստաթուղթ, որով Հաճախորդն արտահայտում է Բանկի կողմից առաջարկվող որոշակի ծառայություններից օգտվելու վերաբերյալ իր ցանկությունը:

«Կայք» - Բանկի պաշտոնական կորպորատիվ կայքը՝ www.inecobank.am հասցեում:

«Հեռակառավարման համակարգ» կամ **«Համակարգ» - «**Ինեկո Օնլայն» (INECO ONLINE), «Ինեկո Մոբայլ» (INECO MOBILE), ՍՄՍ Բենքինգ (SMS Banking), հեռախոսային բենքինգ և Բանկի կողմից առաջարկվող այլ գործիքներ և համակարգեր, (ներառյալ կիրառելիության դեպքում՝ ավտոմատ ինքնասպասարկող սարքերի (ՖԳԻԱՍ-ներ) օգտագործման համար կիռավող ծրագրային ապահովումը և գործիքները), որոնք հնարավորություն են տալիս էլեկտրոնային կապի, հեռախոսակապի միջոցով կամ այլ կերպ օգտվել բանկային ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու:

«Ինեկո Օնլայն» կամ **«INECO ONLINE»** - online.inecobank.am տիրույթում և/կամ Բանկի կողմից նշված այլ հասցեում մատչելի առցանց ծրագրային ապահովում, որը հնարավորություն է տալիս Հաճախորդին համակարգչի, կամ համապատասխան հնարավորություններ ունեցող այլ սարքերի միջոցով օգտվել Բանկի կողմից առաջարկվող առանձին ծառայություններից:

«Ինեկո Մոբայլ» կամ **«INECO MOBILE»** - սմարթֆոնի, պլանշետի կամ համապատասխան հնարավորություններ ունեցող այլ սարքերի միջոցով INECO ONLINE Համակարգից պարզեցված կարգով օգտվելուն հարմարեցված և Բանկի կողմից առաջարկվող ծրագրային ապահովում (հավելված):

«Վճարային համակարգ» - ArCa, MasterCard, Visa և այլ միջավայրերում կիրառվող և ՀՀ օրենսդրության իմաստով այդպիսին համարվող վճարահաշվարկային համակարգեր:

«Վճարային սահմանաչափ»՝ դրամական միջոցների չափ, որի սահմաններում Հաճախորդը կարող է ստանալ կանխիկ գումար և կատարել անկանխիկ փոխանցումներ/վճարումներ:

«Վճարային սահմանաչափի գերածախս»՝ Վճարային սահմանաչափը գերազանցող գործարքի կատարման արդյունքում առաջացած գերածախս:

«Լիազոր մարմին»՝ ՀՀ և/կամ օտարերկրյա պետական մարմիններ, այդ թվում՝ հարկային, գործադիր, դատական, վարչական, կարգավորող մարմիններ, կենտրոնական բանկ, որոնք պայմանագրի և/կամ օրենքի ուժով իրավասություն ունեն Բանկի նկատմամբ:

«Համապատասխանության պարտավորություններ»՝ Բանկի պարտավորությունը համապատասխանել ՀՀ և/կամ օտարերկրյա իրավական ակտերի պահանջներին և/կամ կատարել Լիազոր մարմնի որևէ պահանջ, որը ծագում է պայմանագրի և/կամ ՀՀ օրենսդրության հիման վրա: Ընդ որում՝ պայմանագրի հիման վրա ծագող Բանկի Համապատասխանության պարտավորությունների ստանձնումը, որպես կանոն, նպատակ է հետապնդում Բանկի բնականոն գործունեության ապահովումը, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետության/որակի ապահովումը և/կամ բարձրացումը:

«Կապակցված անձ»՝ ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, որի վերաբերյալ տվյալները Հաճախորդի կողմից տրամադրվել են Բանկին և/կամ վերջինիս հայտնի են դարձել Հաճախորդին ծառայությունների մատուցելու կապակցությամբ, այդ թվում՝ Հաշվով գործառնությունների կատարման իրավունք ունեցող անձինք

(ներառյալ՝ Հաճախորդի ներկայացուցիչները), իրական շահառուները, իրավաբանական անձ Հաճախորդի մասնակիցները/բաժնետերերը/անդամները, գործադիր մարմնի անդամները, հավատարմագրային կառավարիչը, Հաշվով կատարվող գործարքների կողմերը, Հաճախորդի նկատմամբ հսկողություն իրականացնող ցանկացած անձ:

«Բանկային գաղտնիք»՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը:

«Անհատական տվյալներ»՝ Հաճախորդին և/կամ Կապակցված անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ անձի նույնականացումը, այդ թվում՝ այդ անձանց նույնականացման տվյալները, անունները (անվանումները), բնակության/գտնվելու վայրի հասցեները, կոնտակտային տվյալները, տարիքը, ծննդյան ամսաթիվը, ծննդավայրը, ազգությունը, քաղաքացիությունը, անձնական և ամուսնական կարգավիճակը, ռեզիդենտությունը:

«Հարկային տեղեկություններ»՝ ցանկացած տեղեկություններ, հավաստիացումներ կամ ցանկացած փաստաթուղթ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են Հաճախորդի և/կամ Կապակցված անձի հարկային կարգավիճակին, այդ թվում՝ տեղեկություններ, որոնք վերաբերում են հարկային ռեզիդենտությանը և/կամ կազմավորման վայրին, հարկային մշտական բնակության վայրին, հարկ վճարողի հաշվառման համարին, Հարկային հաստատման ձևերին, Անհատական տվալներին:

«Հարկային հաստատման ձևեր»՝ ցանկացած ձև կամ այլ փաստաթուղթ, որը կարող է ժամանակ առ ժամանակ պահանջվել Բանկի կողմից Հաճախորդի և/կամ Կապակցված անձի հարկային կարգավիճակը հաստատելու համար:

«Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ»՝ Անհատական տվյալները և/կամ Բանկային գաղտնիքը և/կամ Հարկային տեղեկությունները:

«Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների մշակում»՝ ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ՝ կապված Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, մուտքագրման, համակարգման, վերափոխման, փոխանցման, պահպանման, ուղղման, ուղեփակման, ոչնչացման և օգտագործման հետ:

1.2. Հաճախորդի կողմից ստորագրված Դիմումի Բանկի կողմից ակցեպտավորմամբ (սահմանված կարգով հաստատմամբ) Բանկի և Հաճախորդի միջև կնքվում է Բանկի կողմից առաջարկվող որոշակի բանկային ծառայություններից և ֆինանսական պրոդուկտներից օգտվելու մասին պայմանագիր, որի անբաժանելի մասն են կազմում Հիմնական պայմանները, Սակագները, Դիմումը, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը: Ընդ որում Հաճախորդի և Բանկի միջև համապատասխան պայմանագիր կնքվում է Բանկի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո միայն:

1.3. Բանկի կողմից կարող են առաջարկվել նաև փաթեթային բանկային ծառայություններ, որոնք հնարավորություն են տալիս օգտվել Բանկի մի քանի ծառայություններից (ընթացիկ և խնայողական հաշիվներ, քարտեր, Համակարգեր և այլն): Բանկի ծառայություններից օգտվող Հաճախորդները կարող են պարզեցված կարգով ստանալ Բանկի կողմից առաջարկվող լրացուցիչ ծառայություններ՝ Համակարգով կամ Բանկի կողմից սահմանված այլ եղանակով Բանկին տեղեկացնելով ծառայությունից օգտվելու մտադրության մասին: Այդ դեպքում համապատասխան ծառայությունից օգտվելու պայմանագիրը համարվում է կնքված՝ Բանկի կողմից այդ ծառայությունը Հաճախորդին մատչելի դարձնելու պահից՝ առանց Բանկի և Հաճախորդի միջև լրացուցիչ գրավոր համաձայնության կնքման կամ այլ ձևականության պահպանման անհրաժեշտության, եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից:

1.4. Առանձին ծառայություններից օգտվելու համար Բանկի կողմից սահմանված Դիմում/Պայմանագրերի, վերջիններիս անբաժանելի մաս հանդիսացող այլ փաստաթղթերի և Հիմնական պայմանների միջև հակասություն լինելու դեպքում վերոնշյալ փաստաթղթերը գերակայում են Հիմնական պայմանների նկատմամբ, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում հարաբերության էությունից:

1.5. Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել լիարժեք տվյալներ, որոնք անհրաժեշտ են իր հետ կապ հաստատելու համար, ինչպես նաև տրամադրել Բանկի կողմից պահանջվող այլ տեղեկություններ և

փաստաթղթեր: Հաճախորդը հայտարարում է, որ իր կողմից Բանկին տրամադրված հասցեները, էլեկտրոնային փոստը, հեռախոսահամարը և կապի այլ միջոցները վերահսկվում են իր կողմից և դրանցով հնարավոր է արդյունավետորեն կապվել իր հետ: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի տրամադրած կապի միջոցներով տեղեկություններ ուղարկելու հետևանքով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման համար:

1.6. Հիմնական պայմանների, Սակագների և/կամ Բանկի և Հաճախորդի միջև պայմանագրային հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերի պայմանները Բանկի կողմից փոփոխվելու դեպքում Բանկն այդ մասին տեղեկացնում է Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով, այդ թվում INECO ONLINE Համակարգի միջոցով՝ դրա մասին անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ Հաճախորդներին առնվազն 15 (տասնհինգ) օր, իսկ մյուս Հաճախորդներին առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ծանուցելով: Կիրառելի օրենսդրությամբ թույլատրված դեպքերում սույն կետով սահմանված ծանուցումները համարվում են պատշաճ կատարված Բանկի Կայքում սահմանված կարգով հայտարարություն հրապարակելու միջոցով:

1.7. Հաճախորդի հետ տեղեկություններ փոխանակելու և Բանկի հետ կապվելու առավել հարմարավետ և ապահով միջոցը INECO ONLINE Համակարգն է, որը Բանկի կողմից համարվում է առաջնային կապի միջոց:

1.8. Հաճախորդը լիազորում և կարգադրում է Բանկին ձեռնարկել անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ ի շահ Հաճախորդի կամ ոչ էական բնույթ կրող (թվաբանական սխալների, տառասխալների և այլ վրիպակների ուղղում, բանկային ծառայությունների անվանումների խմբագրումներ, ծառայությունների վճարների նվազեցում կամ վերացում և այլն) բոլոր փոփոխություններն ուժի մեջ դնելու համար՝ առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության կամ ստորագրության:

1.9. Բանկը Հաճախորդի հետ պայմանագրային կամ այլ գործարար հարաբերություններ հաստատում է Հաճախորդին նույնականացնելուց հետո: Հաճախորդը պարտավոր է ներկայացնել իրեն նույնականացնելու համար Բանկի կողմից պահանջված տվյալներ և փաստաթղթեր: Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելուց, եթե կասկածներ կան Հաճախորդի ինքնության, ինչպես նաև վերջինիս կողմից իրականացվող գործառնությունների օրինականության շուրջ:

1.10. Անչափահաս ֆիզիկական անձինք, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտները կարող են օգտվել բանկային ծառայություններից՝ կիրառելի օրենսդրության և Բանկի կողմից սահմանված հատուկ պահանջները պահպանելու պայմանով:

1.11. Դիմումը ստորագրելով և/կամ Բանկի ծառայություններից օգտվելով՝ Հաճախորդը երաշխավորում և հավաստիացնում է, որ ունի Բանկային ծառայություններից օգտվելու լիարժեք իրավունքներ, Բանկի հետ պայմանագիր կնքելու և կատարելու համար ստացել է իր օրինական ներկայացուցիչների, պարտատերերի, կառավարման իրավասու մարմինների և այլ անձանցից պահանջվող բոլոր համաձայնություններն ու թույլտվությունները, Բանկի հետ կնքված պայմանագիրը վավեր և իրավաբանորեն պարտադիր է Հաճախորդի նկատմամբ և իրեն հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է հանգեցնել Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրի անվավերության: Հաճախորդն ընդունում է, որ իրեն բանկային ծառայություններ մատուցելիս Բանկը հիմնվել է սույն կետով արված երաշխավորությունների և հավաստիացումների ճշմարտացիության վրա և պարտավորվում է Բանկին զերծ պահել դրանց խախտումից բխող վեճերից, պահանջներից և կորուստներից:

1.12. Հաճախորդը պարտավոր է Բանկի կողմից առաջարկվող ծառայություններից օգտվել բարեխղճորեն՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան: Բանկը կարող է դադարեցնել տվյալ ծառայության մատչելիությունը կամ հրաժարվել Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց, եթե Հաճախորդը չարաշահել է ծառայությունները և/կամ դրանցից օգտվել դրանց նպատակային նշանակության բազմակի կամ Բանկի կարծիքով էական խախտումներով, ինչպես նաև ծառայություններն օգտագործել է ոչ իրավաչափ եկամուտներ ստանալու, կամ Բանկի համար լրացուցիչ ծախսեր կամ դժվարություններ ստեղծելու միտումով: Բանկն իրավասու է նաև մերժել (կասեցնել) Հաճախորդի հետ որևէ գործարքի կնքումը և/կամ կատարումը և/կամ Հաճախորդին որևէ ծառայության տրամադրումը, մերժել Հաճախորդի հետ իրավահարաբերությունների հաստատումը, դադարեցնել Հաճախորդի հետ ձևավորված իրավահարաբերությունները կամ միակողմանիորեն՝ Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով (այդ թվում՝ տվյալ պահին գործող Սակագներով) սահմանված կարգով փակել Հաճախորդի հաշիվները, կամ մինչև Հաճախորդի կողմից համապատասխան փաստաթղթերի համալրումը կամ պահանջների կատարումը՝ ժամանակավորապես սահմանափակել այդ հաշիվներով գործառնությունների կատարումը, եթե.

- հաճախորդը և/կամ վերջինիս տվյալները չեն համապատասխանում տվյալ ծառայության մատուցման համար Բանկի կողմից սահմանված պահանջներին,
- առկա են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և/կամ ՀՀ օրենսդրությամբ և/կամ սույն Հիմնական պայմաններով սահմանված հիմքերը, և/կամ

- Հաճախորդը չի կատարում Բանկի օրինական պահանջները, այդ թվում՝ժամանակին չի վճարում Բանկի նկատմամբ ցանկացած պարտավորությունները, չի տրամադրում Բանկի կողմից պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը, խախտում է Բանկի հետ կնքված պայմանագրերի այլ դրույթները
- Բանկի Սակագներով, առանձին ծառայության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

Ընդ որում, Բանկի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.13. Բանկի առանձին գործառնությունների համար Բանկի կողմից կարող են սահմանվել վճարման հանձնարարականների, լիազորագրերի և այլ փաստաթղթերի որոշակի ձև, վավերապայմաններ և այլ պահանջներ: Բանկն իրավունք ունի չընդունել իր պահանջներին չհամապատասխանող փաստաթղթերը՝ մերժելով գործառնությունների իրականացումը: Բանկն իրավունք ունի պահանջել թարգմանել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը հայերեն, ինչպես նաև սահմանված կարգով վավերացնել դրանք: Բանկն կարող է պատճենահանել կամ իր մոտ պահել գործառնությունների համար անհրաժեշտ լիազորագրերը, տեղեկանքներն ու այլ փաստաթղթերը՝ առանց Հաճախորդի ծախսերը հատուցելու պարտավորության:

1.14. Հաճախորդի անունից և ի շահ նրա այլ անձանց կարգադրությամբ գործառնությունների իրականացումը թույլատրվում է Բանկի պահանջներին բավարարող լիազորագրերի հիման վրա: Հաճախորդը պարտավորվում է ապահովել, որ լիազորագիրն ակնհայտ ձևով ցույց տա, որ տվյալ գործառնության իրականացումը բխում է Հաճախորդի կամքից: Բանկի տարածքում տրված և Բանկի կողմից հաստատված պայմանները պարունակող լիազորագրերն ընդունվում են, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանց պարտադիր նոտարական վավերացում չի պահանջվում: Բանկն իրավունք ունի պահանջել նոտարական կարգով և/կամ այլ կերպ հաստատել Բանկի տարածքից դուրս տրված լիազորագրերը:

1.15. Համապատասխան որոշումներ կայացնելիս Բանկը հիմնվում է Հաճախորդի կողմից իրան տրամադրված տեղեկատվության վրա՝ ելնելով վերջինիս արժանահավատությունից: Հաճախորդը պարտավորվում է անհապաղ Բանկի կողմից ընդունելի եղանակով տեղեկացնել Բանկին վերջինիս տրամադրված ցանկացած տեղեկատվության, այդ թվում՝ հասցեի, կապի միջոցների, քաղաքացիության, ռեզիդենտության, իր դեմ հարուցված էական հայցերի և սնանկության վարույթների, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի միջև առկա հարաբերության վրա ազդող այլ փոփոխությունների մասին: Բանկը հիմնվում է Հաճախորդի վերաբերյալ իր մոտ առկա տվյալների վրա և դրանցով ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ այնքան ժամանակ, քանի

դեռ Բանկը չի տեղեկացվել փոփոխությունների վերաբերյալ: Հաճախորդը պարտավորվում է Բանկի պահանջով ներկայացնել փոփոխված տեղեկատվությունը հիմնավորող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Բանկը կարող է սահմանել սույն կետով նախատեսված փոփոխությունների մասին Բանկին տեղեկացնելու հատուկ ձևաթղթեր, կապի միջոցներ և այլ պայմաններ:

1.16. Բանկն իրավունք ունի Հաճախորդի բոլոր Հաշիվներից, Բանկում առկա և Հաճախորդին վճարման ենթակա այլ դրամական միջոցներից անակցեպտ կերպով (առանց Հաճախորդի հանձնարարականի) գանձել Հաճախորդի կողմից Բանկին վճարման ենթակա բոլոր պարտավորությունների (ներառյալ՝ Սակագներով սահմանված վճարների, վարկային, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև այլ պայմանագրային և արտապայմանագրային պարտավորություններից բխող) գումարները, Հաճախորդի հարկային պարտավորությունների գումարները (եթե Բանկն ունի այդպիսի պարտավորություն, որպես Հաճախորդի հարկային գործակալ), ինչպես նաև Հաճախորդի օգտին սխալմամբ փոխանցված կամ Հաճախորդից սխալմամբ չգանձված այլ գումարները: Այն դեպքում, երբ Հաճախորդի հաշիվներին բավարար միջոցներ չկան, Բանկն իրավունք ունի սույն կետի համաձայն Բանկին վճարման ենթակա գումարները գանձել Հաճախորդին տրամադրված վարկերից (ներառյալ՝ վարկային գծերը և օվերդրաֆտները), կամ համապատասխան գումարի չափով մեծացնել Հաճախորդի վարկային պարտավորության չափը (ներառյալ՝ թույլ տալ Վճարային սահմանաչափի գերածախս) Ընդորում, Բանկն իրավունք ունի սահմանել Հաճախորդի պարտավորությունների մարման հերթականությունը, ինչպես նաև սահմանված կարգով ընտրել այն Հաշիվը, որից ենթակա է գանձման պարտավորության գումարը՝ այդ նպատակով իրականացնելով արժույթների փոխարկում Բանկի կողմից որոշված փոխարժեքով:

1.17. Տվյալ արժույթից տարբերվող արժույթով գործառնություններ իրականացնելիս Բանկն իրականացնում է արժույթների փոխարկում: Արժույթի փոխարկումը մեկ այլ արժույթով կատարվում է գործառնության կատարման պահին Բանկի կողմից համապատասխան գործառնության համար որոշված փոխարժեքով: Ընդ որում՝ կանխիկ գործառնությունների դեպքում փոխարկում կարող է իրականացվել միայն այն արժույթների միջև, որոնց համար Բանկը հրապարակայնորեն սահմանում է փոխարժեքներ: Արտարժութային գործառնություններ իրականացնելիս արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով ծագող հնարավոր անբարենպաստ հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:

1.18. Եթե Հաշիվը փակելուն կամ սառեցնելուն, ինչպես նաև Հիմնական պայմանների ուժով հաստատված պայմանագրային հարաբերությունները դադարեցնելուն նախորդող երեք ամիսների ընթացքում Հաճախորդի

Հաշվին դրամական միջոցներ չկան, ապա Սակագներով բանկային սպասարկման համար սահմանված միջնորդավճարները և այլ գանձումները վճարելու Հաճախորդի պարտավորությունը համարվում է դադարած՝ սկսած Հաշիվը փակելուն, սառեցնելուն կամ պայմանագրային հարաբերությունները դադարեցնելուն նախորդող երրորդ ամսվա առաջին օրվանից, եթե այդ գումարները Հաճախորդի կողմից դեռևս վճարված չեն: Հաշիվն ապասառեցվելու կամ պայմանագրային հարաբերությունները շարունակվելու դեպքում բանկային սպասարկման համար սահմանված միջնորդավճարները և այլ գանձումները վճարելու Հաճախորդի պարտավորությունը վերականգնվում է:

1.19. ՀԱՃԱԽՈՐԴԸ ՍՈՒՅՆՈՎ ՏԱԼԻՍ Է ԻՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ԱՅԴ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ:

1.20. ՀԱՃԱԽՈՐԴԸ ՍՈՒՅՆՈՎ ՏԱԼԻՍ Է ԻՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻՆ, ՈՐՊԵՍԶԻ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԻ «ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ԻՆ ԻՐ ՆԵՐԿԱ և ԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՇՎԻ ԱՌՆՎԵԼ ԻՐ ՀԵՏ ՎԱՐԿԱՅԻՆ, ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ: ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԱԼԻՍ Է ԻՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍԶԻ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ, ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ և ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏՎՅԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՀԻՆ, ԱՌԱՆՑ ԻՐԵՆ ՆԱԽԱՊԵՍ ՏԵՂՅԱԿ ՊԱՀԵԼՈՒ, «ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-Ն ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐԻ ԻՐ ԱՊԱԳԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ: ՍՈՒՅՆ ԿԵՏԻ ՈՒԺՈՎ ՏՐՎՈՂ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՆԱԵՎ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՅԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՇԱԿՈՂ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ, ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՐՔ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆԸ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ՍՈՒՅՆՈՎ ՏԵՂԵԿԱՑՎՈՒՄ Է, ՈՐ ԲԱՆԿԸ ԻՐ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ) ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՎ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԻՆ՝ ՆԱԽՈՐԴ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ, ԻՍԿ «ԱՔՌԱ ՔՐԵԴԻԹ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ԻՆ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԵՎՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԻՆ՝ ԿՐԿԻՆ ՆԱԽՈՐԴ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ: Հաճախորդը նաև

թույլատրում է Բանկին մշակել և ստուգել իր կողմից տրամադրված տվյալները՝ այդ նպատակով հարցումներ կատարելով և տեղեկություններ տրամադրելով էլեկտրոնային տվյալների շտեմարաններ, և այլ անձանց՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում և դրանից հետո:

1.21. Հաճախորդների սպասարկման որակը բարձրացնելու և բանկային գործարքների անվտանգությունն ապահովելու համար Բանկն իրավունք ունի ձայնագրել, տեսագրել, էլեկտրոնային եղանակով կամ այլ կերպ պահպանել Բանկի հետ Հաճախորդի հարաբերությունների ընթացքի մասին տվյալները (ներառյալ, բայց չսահմանափակվելով Հաճախորդի զրույցները Բանկի հետ, Հաճախորդի այցելությունները Բանկ, Համակարգերի միջոցով փոխանցված տվյալներն ու ներկայացված հանձնարարականները), ինչպես նաև հետևել Հաճախորդների գործառնություններին: Հաճախորդն ընդունում է, որ վերոհիշյալ տեղեկությունները ծառայում են որպես ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

1.22. Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը Բանկին այլ անձանցից ընդունել Բանկի առջև Հաճախորդի ունեցած դրամական պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև Հաճախորդի հաշիվներին կանխիկ կատարվող դրամական մուտքերը և Հաճախորդին մատուցված կոմունալ ծառայությունների վճարմանն ուղղված գումարները: Հաճախորդը սույնով ազատում է Բանկին այդ գործողություններից բխող ցանկացած պահանջներից և պատասխանատվությունից:

1.23. Հաճախորդը համաձայնում է Բանկից ստանալ Բանկի ծառայությունների վերաբերյալ SMS և այլ հաղորդագրություններ, թղթային և էլեկտրոնային նորություններ, գովազդային նյութեր, պայմանագրեր կնքելու առաջարկներ և այլ նյութեր:

1.24. Հաճախորդը հաստատում է, որ Բանկի և Հաճախորդի միջև կնքվող, ինչպես նաև Հաճախորդի կողմից Բանկին ներկայացվող ցանկացած փաստաթղթերում հնարավոր մի քանի տարբերակներից ընտրության հնարավորություն նախատեսող մասերում լատինատառ «X», «V» կամ որևէ այլ տառով կամ նշանով կատարված նշումներն արտահայտում են Հաճախորդի կամահայտնությունն՝ ընտրելու տվյալ փաստաթղթի տվյալ մասում նախատեսված ընտրության ենթակա համապատասխան տարբերակը:

1.25. Բանկն իրավունք ունի իրականացնել Հաճախորդի հետ կատարվող բոլոր տեսակի հեռախոսազանգերի և տեսազանգերի ձայնագրում, որոնք համարվում են պատշաճ հիմք և ապացույց Հաճախորդի հետ հեռախոսազանգերի և/կամ տեսազանգերի ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների և/կամ տրամադրված և ստացված տեղեկատվության փաստի վերաբերյալ:

2. Բանկային հաշիվներ

2.1. Ստորև բերված դրույթները կարգավորում են Բանկի և Հաճախորդի միջև բանկային, ներառյալ՝ ընթացիկ, քարտային, խնայողական, ավանդային, մետաղական և այլ հաշվիվների բացման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները: Հաշիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և Հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները կարգավորվում են Հիմնական պայմաններով, Սակագներով, ուղեցույցներով, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:

2.2. Հիմնական պայմանների և դրանով նախատեսված այլ փաստաթղթերի դրույթները կիրառվում են նաև սոցիալական փաթեթի հաշիվների, էսքրո հաշիվների, նոտարի դեպոզիտ հաշիվների, կառուցապատողի հատուկ հաշիվների, պետական աջակցության հաշիվների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հատուկ բանկային հաշիվների նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ հատուկ բանկային հաշիվների առանձնահատկությունները կարգավորող օրենսդրությամբ:

2.3. Բանկի կողմից առաջարկվում են տարբեր հնարավորություններ ընձեռող Հաշիվներ: Ընթացիկ հաշիվները հնարավորություն են ընձեռում իրականացնել կանխիկի մուտքագրում և ելքագրում, դրամական միջոցների վճարումներ և փոխանցումներ, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ գործառնություններ:

2.4. Խնայողական հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են Սակագներով: Խնայողական հաշիվներին մուտքագրված գումարների դիմաց տոկոսները հաշվեգրվում են գումարը հաշվին փաստացի ներդրմանը հաջորդող օրվանից մինչև Հաճախորդի գումարը հաշվից դուրս գրելու օրվան նախորդող օրը ներառյալ: Սակագներով կարող է սահմանվել տոկոսների հաշվեգրման և վճարման այլ կարգ, որի պարագայում կգործի Սակագներով սահմանված տոկոսների հաշվեգրման և վճարման կարգը: Ընդ որում, խնայողական հաշիվների դեպքում, Բանկը հօգուտ Հաճախորդի կարող է կիրառել տոկոսների հաշվեգրման այլ կարգ:

2.5. Յուրաքանչյուր հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ, եթե Սակագներով և Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով այլ բան սահմանված չէ:

2.6. Միևնույն արժույթով մեկից ավելի Հաշիվների առկայության դեպքում Հաճախորդը կարող է տեղեկացնել Բանկին այն Հաշվի մասին, որն օգտագործվելու է համապատասխան գործառնության (օրինակ՝ ավանդի տոկոսների վճարման) համար, եթե դա հնարավոր է տվյալ գործառնության կանոններով: Բանկը կարող է իր հայեցողությամբ ընտրել Հաճախորդի համապատասխան Հաշիվը և այն օգտագործել համապատասխան գործառնության համար:

2.7. Սակագներով կարող են սահմանվել կանխիկ գումարի առավելագույն սահմանաչափեր, որոնց մուտքագրումը և ելքագրումը կարող է կատարվել համաձայնեցված եղանակով Բանկին նախնական ծանուցում ներկայացնելու պայմանով:

2.8. Մուտքագրված թղթադրամների և մետաղադրամների կեղծված լինելու հետ կապված կասկածների դեպքում Բանկը կարող է առգրավել դրանք՝ հանձնելով իրավապահ մարմիններին կամ մասնագիտացված անձանց՝ հետագա ուսումնասիրության համար: Այդ դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաշվին մուտքագրված գումարի պակասորդի համար:

2.9. Հաճախորդի Հաշվին մուտքագրման ենթակա գումարի արժույթին համապատասխան արժույթով Հաճախորդի Հաշիվ չունենալու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար բացել մուտքագրվող միջոցների արժույթով Հաշիվ և գումարը մուտքագրել նոր բացված Հաշվին:

2.10. Իր Հաշվից այլ անձանց Հաշիվներին գումարներ փոխանցելու համար Հաճախորդը կարող է վճարման հանձնարարականներ ներկայացնել Բանկի մասնաճյուղերում, Համակարգերի միջոցով, ինչպես նաև Քարտային հաշվին կցված Վճարային համակարգերի միջոցով, եթե վերջիններս թույլ են տալիս իրականացնել միջոցների փոխանցումներ: Հաճախորդի վճարման հանձնարարականները կատարվում են Հաճախորդի համապատասխան Հաշվին տվյալ հանձնարարականը կատարելու համար (այդ թվում՝ հանձնարարականից բխող Սակագներով նախատեսված համապատասխան վճարները կատարելու) բավարար միջոցների առկայության դեպքում: Հաշվին միջոցների բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից: Վճարման հանձնարարականների մասնակի կատարում չի իրականացվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2.11. Հաճախորդի Հաշվին կատարված վճարումներն ու այլ մուտքերը կրեդիտագրվում (մուտքագրվում) են Հաշվին, ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտքագրելուն հաջորդող բանկային օրը, եթե այլ բան նախատեսված չէ կիրառելի իրավական ակտերով:

2.12. Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է Հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Բանկը պարտավոր է հաճախորդի կարգադրությամբ Հաշվից դրամական միջոցներ դուրս գրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե այլ ժամկետներ նախատեսված չեն օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով կամ Սակագներով: Հաճախորդը կարող է ներկայացնել Հաշվից ավելի ուշ ամսաթվի միջոցներ փոխանցելու հանձնարարականներ, ինչպես նաև հանձնարարել Բանկին հետագայում պարբերաբար միջոցներ գանձել և փոխանցել վճարման հանձնարարականում նշված հասցեատիրոջ: Այդ դեպքում Բանկը Հաճախորդի հանձնարարականում նշված հասցեատիրոջ օգտին գումարներ է փոխանցում վճարման հանձնարարականում նշված ժամկետում կամ ամսաթվերին՝ Հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում:

2.13. Վճարման հանձնարարականները ներկայացվում և կատարվում են Բանկի կողմից սահմանված ձևով կամ համապատասխան Վճարային համակարգի կանոններին համապատասխան: Բանկն իրավունք ունի չկատարել Բանկի կողմից սահմանված ձևին չհամապատասխանող հանձնարարականները:

2.14. Վճարման հանձնարարականները լրացվում են Հաճախորդի կողմից տրամադրված տվյալների հիման վրա: Բանկը կարող է առաջնահերթ համարել միջոցները ստացողի հաշվեհամարը և հանձնարարականը կատարել Բանկին հանձնված հաշվեհամարի հիման վրա, նույնիսկ, երբ հետագայում պարզվի, որ առկա էր անհամապատասխանություն հաշվեհամարի և հաշվետիրոջ այլ տվյալների միջև: Շահառուի բանկն իրավունք ունի շահառուին նույնացնելու հաշվի համարով:

2.14.1. Եթե շահառուի բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականում նշված շահառուն նույնացվում է անունով և հաշվի կամ նույնացման այլ համարով, սակայն անունն ու համարը նույնացնում են տարբեր անձանց, ապա շահառուի բանկն իրավունք ունի շահառուին նույնացնելիս հիմք ընդունել հաշվի կամ նույնացման համարը, եթե շահառուի բանկը տեղյակ չէ, որ շահառուի անունն ու համարը նույնացնում են տարբեր անձանց: Ընդ որում, շահառուի բանկը պարտավոր չէ պարզել, թե արդյոք անունն ու համարը նույնացնում են նույն անձին:

2.14.2. Երբ Բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի համաձայն գումարը ենթակա է վճարման հաճախորդի Բանկում գտնվող հաշվին կամ վճարման հանձնարարականի գումարը ենթակա չէ

կրեդիտագրման, Բանկը կարող է չտեղեկացնել Հաճախորդին վճարման հանձնարարականի ստացման մասին, անգամ այն դեպքում, երբ դա պահանջվում է վճարման հանձնարարականով: Բանկի կողմից վճարման հանձնարարականի ստացման և/կամ վճարման մասին հաճախորդին չտեղեկացնելու դեպքում Բանկը հաճախորդին տոկոսներ չի վճարում և հաճախորդի կրած այլ վնասները չի հատուցում:

2.15. Հաշվից միջոցների դուրսգրումը կարող է իրականացվել երրորդ անձանց հանձնարարականներով՝ համապատասխան Վճարային համակարգի կանոնների համապատասխան կամ Բանկի սահմանած ձևով: Բանկն իրավունք ունի մերժել երրորդ անձանց պահանջով միջոցների դուրսգրման գործարքները, եթե դրանք չեն համապատասխանում Բանկի սահմանած պահանջներին:

2.16. Հաշվից գումարներ ելքագրելիս Հաշվին միջոցների անբավարար լինելու դեպքերում Բանկը, Հաճախորդի հետ առանձին կնքված պայմանագրի համաձայն, կարող է վարկավորել Հաշիվը (տրամադրել օվերդրաֆտ) և միջոցները դուրսգրել Հաճախորդին տրամադրված վարկային միջոցների հաշվին: Հաշվի վարկավորման արդյունքում Հաճախորդին տրամադրված միջոցների օգտագործման, դրանց նկատմամբ հաշվարկվող տոկոսների հաշվարկման կարգն ու չափը սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև առանձին կնքվող պայմանագրով:

2.17. Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Եթե Հաճախորդի Հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ Հաճախորդի չմարված ժամկետանց պարտավորությունների գումարները: Ընդ որում, Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել Բանկի նկատմամբ Հաճախորդի ունեցած պարտավորությունների գումարների գանձման հերթականությունը:

2.18. Հաշիվները տնօրինելու Հաճախորդի իրավունքները, ինչպես նաև դրանցով կատարվող առանձին գործառնություններ կարող են սահմանափակվել կամ արգելվել իրավասու պետական մարմինների կողմից դրված կալանքների, արգելանքների կամ այլ սահմանափակումների, ինչպես նաև Բանկի հետ կնքված գործարքների արդյունքում կիրառված սառեցումների հետևանքով: Ի լրումն Հիմնական պայմաններով նախատեսված դեպքերի՝ առանց Հաճախորդի կարգադրության Հաշվից միջոցների դուրսգրում կարող է իրականացվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, հարկային մարմինների և դրա իրավասություն ունեցող այլ պետական մարմինների ակտերի հիման վրա:

2.19. Բանկը Հաճախորդի բոլոր Հաշիվների մնացորդների, դրամական մուտքերի և հաշվեգրվելիք տոկոսագումարների նկատմամբ ունի գրավի իրավունք՝ ի ապահովումն Հաճախորդի՝ Բանկի հետ կնքված բոլոր գործարքներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով Բանկի նկատմամբ առաջացած պարտավորությունների կատարման: Հաճախորդն իրավունք չունի առանց Բանկի գրավոր համաձայնության գրավ դնել կամ այլ կերպ ծանրաբեռնել Հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները:

2.20. Բանկը ամսական պարբերականությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ Հաճախորդին տրամադրում է Հաշվի վերաբերյալ քաղվածք: Բանկը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հանդիսացող Հաճախորդին կարող է քաղվածք չտրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ Հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել: Քաղվածքները տրամադրվում են Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով, այդ թվում INECO ONLINE Համակարգի միջոցով: Բանկը քաղվածքն ուղարկում է նաև էլեկտրոնային փոստով, եթե Հաճախորդը Բանկին տրամադրել է իր էլեկտրոնային փոստի հասցեն: Բանկը կարող է խմբավորել Հաշիվների շարժերը Հաճախորդին ներկայացվող մեկ քաղվածքում:

2.21. Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել իր Հաշվի վերաբերյալ Հաշվի քաղվածք՝ գանձելով Հաշվի քաղվածքի տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:

2.22. Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են Հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Քաղվածքում ներկայացված տվյալները համարվում են ընդունված և հաստատված Հաճախորդի կողմից, եթե Հաճախորդը քաղվածքի վերաբերյալ դիտողությունները գրավոր ձևով չի ներկայացրել Բանկին՝ քաղվածքը ստանալու պահից 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում: Բանկը պատասխանատու չէ քաղվածքների առաքման հետ կապված փոստային ծառայությունների կամ կապի միջոցների սխալի, թերացման, քաղվածքների կորստյան կամ հափշտակության հետևանքով առաջացած վնասի, ներկայացված պահանջների կամ տեղեկատվության հրապարակման համար:

2.23. Հաշվի սպասարկման համար սահմանված և ամսական այլ վճարներն ավելի քան 3 (երեք) ամիս անընդմեջ չվճարելու դեպքում Բանկը կարող է դադարեցնել Հաշվի սպասարկումը (սառեցնել Հաշիվը):

2.24. Բանկը կարող է միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու փակել զրոյական մնացորդով և մեկ տարի անընդմեջ շարժ չունեցող Հաշիվները:

2.25. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու դադարեցնել Հաշվի սպասարկումը կամ փակել այն, եթե կասկածներ կան Հաշիվներով իրականացվող գործառնությունների օրինականության վերաբերյալ կամ Հաճախորդը, Բանկի կողմից սահմանված ժամկետում չի տրամադրել Բանկի կողմից պահանջված տեղեկությունները, ինչպես նաև Հաճախորդի կողմից ստանձնած այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում:

2.26. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն հրաժարվել Հաշվից և դիմել Բանկին Հաշիվը փակելու համար՝ այդ մասին Բանկին ոչ ուշ քան 7 (յոթ) բանկային օր առաջ Բանկի կողմից սահմանված եղանակով ծանուցելով և ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները: Բանկը կարող է հրաժարվել Հաշիվը փակելուց, եթե Հաշվի վրա դրված են արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ Հաշիվն անհրաժեշտ է Հաճախորդի կողմից օգտագործվող այլ ծառայություններից օգտվելու համար, կամ Հաճախորդն ունի չկատարված պարտավորություններ Բանկի հանդեպ:

2.27. Հաշվի փակման պահից դադարեցվում են այդ Հաշիվը սպասարկող Քարտերի սպասարկումն ու Համակարգերից օգտվելու Հաճախորդի լիազորությունները: Եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից, Հաշիվը փակելիս փակվում են նաև դրան կցված այլ Հաշիվները:

2.28. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել Հաճախորդի հաշվի և/կամ դրան մուտքագրված գումարի՝ Հաճախորդի կողմից տնօրինման, տիրապետման և օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև մերժել փոխանցված գումարի մուտքագրումը Հաճախորդի հաշվին և/կամ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության հետ փոխանցել այդ գումարը փոխանցող կողմին (այդ թվում ելքագրելով այն Հաճախորդի հաշվից)՝ գանձելով Սակագներով սահմանված միջնորդավճարը, եթե.

- Հաճախորդի հաշվին փոխանցված կամ մուտքագրված գումարի հետ կապված Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ՝ զեղծարար, կեղծ կամ շինծու գործարք կամ գործարքների շղթայի մաս լինելու վերաբերյալ, այդ թվում տեղական/միջազգային վճարային համակարգերից կամ ֆինանսական կազմակերպություններից ստացված զեղծարարության հաշվետվություններում խնդրահարույց գործարքը նույնականացնող տվյալների առկայության դեպքում,
- Բանկը գումարը փոխանցող բանկից ստանում է տեղեկատվություն և գրավոր պահանջ՝ փոխանցման գործարքը որպես զեղծարար, կեղծ և/կամ շինծու որակելու և Հաճախորդին փոխանցված գումարը հետ վերադարձնելու մասին,

- Փոխանցումը կապված է կրիպտոարժույթով որևէ տեսակի գործարքի հետ, և/կամ գործարքի կողմ է կրիպտոարժույթի հետ կապված գործունեություն իրականացնող անձ:

2.29. Սույն Հիմնական պայմանների 2.28 կետով սահմանված որևէ հանգամանքի տեղի ունենալու և/կամ Բանկի մոտ համապատասխան հանգամանքի տեղի ունենալու վերաբերյալ կասկածի առաջացման դեպքում, Բանկն իրավունքի ունի կասեցնել և/կամ դադարեցնել Հաճախորդին բոլոր բանկային ծառայությունների կամ որոշ բանկային ծառայությունների մատուցումը և/կամ փակել Հաճախորդի հաշիվները Բանկում:

3. Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

3.1. Բանկն առաջարկում է Ինեկո Օնլայն, Ինեկո Մոբայլ, Բանկ-Հաճախորդ և այլ Համակարգեր՝ ինտերնետով, հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու: Համակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել Հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ Համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Համակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

3.2. Համակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Հաճախորդների համար: Հաճախորդին համապատասխան Համակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Հաճախորդին համակարգից օգտվելու հնարավորություն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Համակարգի տրամադրման պայմանագիր՝ Հիմնական պայմաններին

համապատասխան: Համակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Հիմնական պայմանները, Սակագները, համապատասխան Համակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:

3.3. Կողմերն ընդունում են, որ Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Համակարգերի միջոցով Հաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:

3.4. Կողմերն ընդունում են, որ Հաճախորդին նույնականացնելուց հետո Համակարգ մուտք գործելու համար Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Հաճախորդի կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: INECO ONLINE Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:

3.5. Համակարգերի միջոցով Հաճախորդների սպասարկումը իրականացվում է միայն Հաճախորդի (Հաճախորդի ներկայացուցչի) մոտ համապատասխան Համակարգից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովվածության առկայության դեպքում: Ընդ որում Բանկը Հաճախորդին հեռակառավարման համակարգերի միջոցով ծառայություններ մատուցում է բացառապես Բանկի համար ընդունելի ծրագրային և տեխնիկական ապահովվածության միջոցների կիրառմամբ: Համակարգերից օգտվելիս կարող են կիրառվել ինտերնետային, էլեկտրոնային և այլ հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորների և այլ անձանց օգտին գանձվող վճարներ, որոնց համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

3.6. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:

3.7. INECO ONLINE, Bank-Client և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թոքեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:

3.8. Իրավաբանական անձ (ներառյալ՝ իրավաբանական անձի մասնաճյուղ, ներկայացուցչություն և այլ առանձնացված ստորաբաժանում), հիմնարկ կամ անհատ ձեռնարկատեր Հաճախորդների անունից Համակարգը կարող են շահագործել վերջիններիս անունից լիազորված մեկ կամ մի քանի օգտագործողներ: Հաճախորդը պատասխանատվություն է կրում օգտագործողների կողմից կատարված գործառնությունների հետևանքով Բանկին կամ երրորդ անձանց պատճառված վնասի հատուցման համար: Բանկը պատասխանատվություն չի կրում օգտագործողների կողմից կատարված գործառնությունների հետևանքով Հաճախորդին կամ երրորդ անձանց պատճառված վնասի համար: Հաճախորդը պարտավորվում է ինքնուրույն կարգավորել և Բանկին զերծ պահել ցանկացած պահանջներից, որոնք առաջացել են օգտագործողների կողմից Համակարգի շահագործման ընթացքում:

3.9. Համակարգերը ենթակա են օգտագործման դրանց նպատակային նշանակությանը խիստ համապատասխան: Հաճախորդը պարտավոր է պահպանել Համակարգերի ծրագրային ապահովման օգտագործման հետ կապված մտավոր սեփականության բոլոր իրավունքները և թույլ չտալ Համակարգի ծրագրային ապահովման պաշտպանված մասի վերծանում, ձևափոխում, արտատպում և տարածում:

3.10. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:

3.11. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված Վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների,

ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:

3.12. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

3.13. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:

3.14. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

3.15. Բանկն իրավունք ունի Հեռակառավարման համակարգի միջոցով սպասարկվող բանկային որոշ ծառայությունները հասանելի դարձնել Հեռակառավարման համակարգի միայն «Ինեկո Օնլայն» կամ «Ինեկո

Մոբայլ» Հեռակառավարման համակարգերից որևէ մեկում: Բանկն իրավունք ունի նաև Հեռակարավարման համարգը հասանելի դարձնել Հաճախորդին որոշակի սահմանափակումներով:

3.16. Բանկն իրավունք ունի արգելել և/կամ սահմանափակել Հեռակառավարման համակարգի հասանելիությունը որոշ երկրներում:

3.17. Հաճախորդն իրավունք չունի օգտվել Հեռակառավարման համակարգից ինքնաշխատ կամ որևէ այլ տեսակի ծրագարային ապահովման կիրառման միջոցով: Հաճախորդի կողմից սույն կետի խախտման կամ Բանկի մոտ Հաճախորդի կողմից սույն կետի խախտման կասկածի առաջացման դեպքում Բանկն իրավունք ունի կասեցնել և/կամ դադարեցնել Հաճախորդի հեռակառավարման համակարգի շահագործումը և/կամ Հեռակառավարման համակարգով որոշ գործարնքերի կատարումը:

3.18. Հաճախորդը պարտավոր է Հեռակառավարման համակարգի գաղտնաբառը օգտագործել միայն Բանկի Հեռակառավարման («Ինեկո Օնլայն» և/կամ «Ինեկո Մոբայլ») համակարգում և/կամ Բանկի կողմից առաջարկվող այլ համակարգերում, որոնց մասին Հաճախորդը պատշաճ տեղեկացվում է Բանկի կողմից, և այն չօգտագործել որևէ այլ կայքում կամ հավելվածում: Հաճախորդի կողմից սույն կետի խախտման կամ Բանկի մոտ Հաճախորդի կողմից սույն կետի խախտման կասկածի առաջացման դեպքում՝ Բանկն իրավունքի ունի կասեցնել և/կամ դադարեցնել Հաճախորդի հեռակառավարման համակարգի շահագործումը և/կամ Հեռակառավարման համակարգով որոշ գործարքների կատարումը: Հաճախորդը, Հեռակառավարման համակարգի իր անհատականացման տվյալները *(մուտքանուն, գաղտնաբառ և այլն)* համացանցի որևէ տիրույթում կիրառելու դեպքում պարտավոր է ինքնուրույն ստուգել և հավաստիանալ համապատասխան տիրույթի պատկանելիությունը Բանկին և կրում է դրա չստուգման արդյունքում առաջացող բոլոր բացասական հետևանքների ռիսկը:

3.19. Հաճախորդի կողմից որևէ զեղծարարության կամ հակաօրինական գործունեության իրականացման վերաբերյալ Բանկի մոտ կասկածի առաջացման դեպքում, Բանկն իրավունք ունի կասեցնել և/կամ դադարեցնել Հաճախորդին բոլոր բանկային ծառայությունների կամ որոշ բանկային ծառայությունների մատուցումը և փակել Հաճախորդի հաշիվները Բանկում:

4. Բանկային քարտեր

4.1. Սույն բաժնի դրույթները կարգավորում են բանկային (վճարային) քարտերի (Քարտ) տրամադրման, օգտագործման, փակման և փոփոխման կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև ծագող պայմանագրային հարաբերությունները: Ի լրումն Հիմնական պայմանների և Սակագների Քարտերի առանձին տեսակները, վերջիններիս առանձնահատկություններն ու ընձեռած հնարավորությունները, քարտային գործառնությունների անվտանգությանը վերաբերող և այլ պահանջները կարգավորվում են նաև Հիմնական պայմանների անբաժանելի մաս հանդիսացող Քարտերի օգտագործման ուղեցույցով, Կայքում հրապարակվող կանոններով, Բանկի և Հաճախորդի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:

4.2. Բանկն առաջարկում է տարբեր գործառնություններ իրականացնելու հնարավորություն ընձեռող, ArCa, MasterCard, Visa և այլ վճարահաշվարկային համակարգերի կողմից սպասարկվող Քարտեր, որոնց վրա տարածվում են նաև տվյալ Վճարային համակարգի կողմից սահմանված կանոնները, որոնք նույնպես սահմանում են Քարտերի օգտագործման կարգը:

4.3. Քարտը դրան կցված հաշվին (Քարտային հաշիվ) առկա միջոցները տնօրինելու և դրանցով գործարքներ կատարելու հնարավորություն ընձեռող գործիք է: Քարտերի միջոցով հնարավոր է կանխիկ գումար ստանալ բանկոմատներում, վճարումներ կատարել տվյալ տեսակի քարտ սպասարկող վաճառքի կետերում (POS տերմինալների միջոցով), առցանց առևտուր կատարել, ինչպես նաև իրականացնել այլ գործառնություններ: Յուրաքանչյուր Քարտի ընձեռած հնարավորությունները տարբերվում են՝ կախված Քարտի տեսակից, համապատասխան ծառայության համար Բանկի սահմանած կանոններից և այլ գործոններից: Քարտի որոշ հնարավորություններ կարող են մատչելի չլինել առանձին գործառնություններ իրականացնելիս, ինչպես նաև այլ բանկերի բանկոմատներից և POS տերմինալներից օգտվելիս: Հաճախորդը տեղյակ է և ընդունում է, որ Քարտն օգտագործելիս կարող են կիրառվել այլ բանկերի, Վճարային համակարգերի և երրորդ անձանց կողմից սահմանված վճարներ, սակագներ և հատուկ պայմաններ, որոնք դուրս են Բանկի վերահսկողությունից և Բանկը դրանց համար պատասխանատվություն չի կրում:

4.4. Քարտը Բանկի սեփականությունն է և Հաճախորդին տրամադրվում է օգտագործման Քարտի վրա նշված ժամկետով: Բանկն իրավունք ունի պահանջել անհապաղ Բանկ վերադարձնել Քարտը, դադարեցնել դրա օգտագործումը կամ փոխարինել այն:

4.5. Քարտային հաշիվները կարող են վարվել ընթացիկ և այլ Հաշիվներից առանձին և դրանց նկատմամբ տարածվում են Հաշիվների վերաբերյալ Հիմնական պայմանների դրույթները: Բանկը կարող է Քարտային հաշվին տալ ընթացիկ հաշվի կարգավիճակ՝ Քարտային հաշվի համար մատչելի դարձնելով ընթացիկ հաշվի համար նախատեսված գործառնությունները կամ Քարտային հաշիվը միացնել ընթացիկ հաշվին՝ փակելով Քարտային հաշիվը և Քարտի սպասարկումն իրականացնելով ընթացիկ հաշվի միջոցով:

4.6. Քարտը, ինչպես նաև PIN ծածկագիրը Հաճախորդին տրամադրվում են փակ ծրարով՝ առձեռն՝ Բանկի տարածքում, կամ նրան ուղարկվում են փոստով կամ այլ հեռահար եղանակով: PIN ծածկագիրը կարող է սահմանվել Հաճախորդի կողմից Քարտի ակտիվացման պահին, որի իրականացման համար օգտագործվում է գաղտնաբառ կամ մեկանգամյա օգտագործման հաստատման կոդ: Հաճախորդը պարտավորվում է Քարտը ստանալուն պես ստորագրել Քարտի վրա հատուկ առանձնացված վահանակի վրա՝ վավերացնելով այն:

4.7. Առանձին քարտեր ենթակա են ակտիվացման նախքան դրանք օգտագործելը: Դրա համար անհրաժեշտ է հետևել Քարտի հետ ստացված ցուցումներին կամ կապվել Բանկի հետ՝ Քարտի վրա նշված հեռախոսահամարով:

4.8. Կողմերն ընդունում են, որ Քարտի օգտագործմամբ գործարքներ կատարելիս Քարտի համարի, Քարտի դարձերեսին առկա CVV կոդի, PIN ծածկագրի, 3DSecure գործարքների հաստատման կոդի, ստորագրության և/կամ այլ նույնականացնող տվյալների կիրառմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Քարտային հաշվին առկա միջոցներով համապատասխան գործարքն իրականացնելու համար:

4.9. Քարտով իրականացվող բոլոր հաշվարկները, ներառյալ վճարվող/կանխիկացվող գումարները և դրա հետ կապված թողարկող և/կամ սպասարկող բանկին, ինչպես նաև Վճարային համակարգին հասանելիք վճարները, գանձվում են Քարտային հաշվից, տվյալ պահին առկա միջոցների սահմաններում: Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված դեպքերում բանկը կարող է վարկավորել Քարտային հաշիվը՝ մեծացնելով Վճարային սահմանաչափը: Վճարային սահմանաչափը գերազանցելու դեպքում կարող է կիրառվել գերածախսի տույժ՝ Սակագներով սահմանված կարգով:

4.10. Քարտային հաշիվներով գործառնությունների կատարման ժամկետներն ու պայմանները սահմանվում են Բանկի և Վճարային համակարգերի կողմից: Հաճախորդը տեղյակ է և ընդունում է, որ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տվյալները կարող են ստացվել Վճարային համակարգերից և Քարտային հաշվին արտացոլվել հետագայում: Քարտային հաշիվներով հաշվարկներն իրականացնելու համար անհրաժեշտ արտարժութային փոխարկումները կատարվում են գործարքի վերաբերյալ Վճարային համակարգից ստացված տեղեկությունների հիման վրա գործարքը Քարտային հաշվին հաշվառելու բանկային օրը՝ Բանկի կողմից սահմանված կարգով

4.11. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնություն կատարելու դեպքում գործում է արժույթի փոխարկման ստորև նկարագրված կարգը.

- Գործարքի կատարման պահին քարտային փոխարժեքը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող միջին փոխարժեքի առքի/վաճառքի համար սահմանված արժեքով (համապատասխանաբար նվազեցված/ավելացված Արմենիան Քարդ պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված տոկոսադրույքը), և/կամ Visa և MasterCard վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով,
- Արմենիան Քարդ պրոցեսինգային կենտրոնի միջոցով քարտերի սպասարկում իրականացնող բանկերի սպասարկման ցանցում, և/կամ այլ բանկերի սպասարկման ցանցում Visa և MasterCard վճարային համակարգերի քարտերով ԱՄՆ դոլարով գործարք կատարելիս գործառնության գումարը հաշվանցվում է Բանկի կողմից հաշվանցման օրվան նախորդող օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով,
- Այլ բանկերի սպասարկման ցանցում Visa և MasterCard վճարային համակարգերի քարտերով ԱՄՆ դոլարից տարբերվող արժույթով գործարք կատարելիս գործառնության գումարը նախ փոխարկվում է ԱՄՆ դոլարի Visa և MasterCard վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով, որից հետո փոխարկվում քարտային հաշվի արժույթի՝ Բանկի կողմից հաշվանցման օրվան նախորդող օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Ընդ որում, նշված դեպքերում գործարքի գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու համար Visa քարտերի դեպքում գանձվում է 2% միջնորդավճար:

4.12. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Քարտի օգտագործման կանոնները, PIN ծածկագրի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել այլ անձանց կողմից Քարտի ապօրինի օգտագործման հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների, ինչպես նաև Քարտի սպասարկումն ապահովող այլ անձանց, ներառյալ

վճարահաշվարկային կազմակերպությունների գործողություններով Հաճախորդի կորուստների կամ վնասի համար:

4.13. Քարտով իրականացվող գործառնությունների ընթացքում ծագող ռիսկերը նվազեցնելու նպատակով, ելնելով Քարտային հաշվի մնացորդի, Քարտային հաշվով իրականացվող գործարքի չափերից, կատարման վայրից, գործարքի համար նախատեսված սահմանաչափից, Բանկն իրավունք ունի Հաճախորդին տեղեկացնել Քարտային հաշվով գործարքների կատարման և Քարտային հաշվի շարժի վերաբերյալ՝ հեռախոսային կամ կապի այլ միջոցով հաղորդագրություն ուղարկելով, և ըստ այդմ գանձել Սակագներով սահմանված համապատասխան վճարներ:

4.14. Հաճախորդը չի կարող Քարտային հաշիվն օգտագործել կամ թույլատրել օգտագործել որևէ անօրինական գործարք կամ դրանից բխող վճարում կատարելու նպատակով: Վճարումների կատարման վայրում (ներառյալ՝ համապատասխան ինտերնետային կայքերում) Քարտի լոգոտիպի արտացոլումը չի նշանակում, որ կատարվող գործառնությունն օրինական է: Անօրինական գործարքի կատարման դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել հատուցելու դրա հետևանքով իր կատարած ծախսերը և կրած վնասները:

4.15. Քարտի ապօրինի օգտագործման կամ նման վտանգի դեպքում Հաճախորդի դիմումով կամ իր նախաձեռնությամբ նշված հիմքերի ի հայտ գալու պահին Բանկը ժամանակավորապես դադարեցնում է Քարտի սպասարկումը (արգելափակում է Քարտը): Հաճախորդը կրում է մինչև Քարտը Բանկին վերադարձնելը Քարտով իրականացված, հավաստագրում (Բանկի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից Քարտով գործառնությունների կատարման թույլտվություն) չպահանջող գործարքների, Քարտի ապաարգելափակման հետ կապված, ինչպես նաև վերջիններով պայմանավորված՝ Բանկի կատարած բոլոր ծախսերի և կրած բոլոր վնասների ռիսկերը: Բանկը կարող է նաև իր հայեցողությամբ դադարեցնել կամ կասեցնել Քարտի սպասարկումը, պահանջել վերադարձնել կամ փոխարինել Քարտը կամ հրաժարվել դրա վերաթողարկումից կամ լուծել քարտի տրամադրման և օգտագործման վերաբերյալ համապատասխան պայմանագիրը՝ Քարտի օգտագործման օրինականության շուրջ կասկածների, ինչպես նաև Հաճախորդի կողմից Հիմնական պայմանների և Բանկի հանդեպ ունեցած այլ պարտավորությունների պայմանների խախտման դեպքում:

4.16. Քարտով գործառնություններ կատարելու հավաստում են էլեկտրոնային տերմինալի տպած և Հաճախորդի կողմից ստորագրված կամ PIN կոդի մուտքագրումը հավաստող անդորրագիրը, էլեկտրոնային առևտրի (E-commerce) կետի միջոցով իրականացված գործարքի վերաբերյալ համակարգից ստացված հաստատումը,

բանկոմատի կազմած էլեկտրոնային մատյանը, հաշվից քաղվածքը, ՖԳԻԱՍ-ների կողմից տրամադրված անդորրագրերն ու էլեկտրոնային փաստաթղթերը և համապատասխան Վճարային համակարգում կիրառվող այլ փաստաթղթեր, որոնք համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

4.17. Բանկն իրավունք ունի իր կամ Հաճախորդի նախաձեռնությամբ նախատեսել Քարտով գործառնությունների իրականացման սահմանաչափեր՝ սահմանափակելով սահմանաչափերի գերազանցման հնարավորությունը Հաճախորդի կողմից կամ սահմանաչափերի գերազանցման համար սահմանելով լրացուցիչ վճարներ: Ընդ որում Քարտային հաշվի Վճարային սահմանաչափի գերածախսի դեպքում Հաճախորդը պարտավոր է անմիջապես վերականգնել գերածախսված գումարը:

4.18. Հաճախորդի դիմումով Բանկը կարող է տրամադրել տվյալ հաշվին կցված լրացուցիչ Քարտեր այլ ֆիզիկական անձանց անունով: Լրացուցիչ Քարտը կցվում է Հաճախորդի Քարտային հաշվին, և դրա համար առանձին հաշիվ չի բացվում, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ:

4.19. Հաճախորդը (հիմնական քարտապանը) կից Քարտի քարտապանի (լրացուցիչ քարտապանը) հետ համապարտ պատասխանատվություն է կրում կից Քարտով կատարված գործառնությունների համար: Կից Քարտի քարտապանի նկատմամբ հավասարապես տարածվում են Հաճախորդի (հիմնական քարտապանի) նկատմամբ կիրառելի սույն Հիմնական պայմանները, Սակագները ու Քարտի սպասարկումը կարգավորող այլ փաստաթղթերի դրույթները:

4.20. Եթե Քարտի գործողության ժամկետը լրանալուց 1 (մեկ) ամիս առաջ Հաճախորդը գրավոր ձևով չի հայտնում Բանկին Քարտի տրամադրման և սպասարկման հետ կապված իրավահարաբերությունների, այդ թվում նաև՝ Քարտի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին, ապաԲանկը կարող է Քարտը յուրաքանչյուր անգամ վերաթողարկել նույն, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տվյալ պահին Բանկի կողմից որոշված այլ պայմաններով: Քարտի վերաթողարկման դեպքում ժամկետանց Քարտի փոխանակումը նոր Քարտով կատարվում է Քարտի գործողության ժամկետի վերջին բանկային օրը:

4.21. Բանկն իրավունք ունի դադարեցնել Քարտի սպասարկումը, արգելափակել Քարտը և/կամ փակել Քարտային հաշիվը, եթե Քարտի թողարկումից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում Հաճախորդը չի ներկայացել Քարտը ստանալու և չի վճարել Քարտի բացման և սպասարկման հետ կապված Սակագներով սահմանված վճարները, կամ եթե Քարտի թողարկումից հետո մեկ տարվա ընթացքում Հաճախորդը չի ներկայացել Քարտը ստանալու, սակայն վճարել է Քարտի բացման և սպասարկման հետ կապված Սակագներով սահմանված վճարները:

4.22. Քարտային հաշվով կատարված գործարքներն իր կողմից կատարված չլինելու մասին հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում Հաճախորդը կարող է բողոքարկել Քարտով կատարված գործարքները: Բողոքարկման հետ հապված հարաբերությունները կարգավորվում են համապատասխան Վճարային համակարգի կողմից սահմանված կանոններով (ներառյալ՝ դրանցից բխող վեճերի լուծման վերաբերյալ պայմանները): Բանկը Հաճախորդին տեղեկացնում է բողոքարկման ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

4.23 Այն դեպքում, երբ Բանկում Իրավաբանական անձ Հաճախորդի անունով գործում է բիզնես Քարտ, որի օգտագործող է հանդիսանում Իրավաբանական անձ Հաճախորդի տնօրենը (գործադիր մարմինը), ապա տնօրենի փոփոխության դեպքում, եթե նոր տնօրենը գրավոր եղանակով չի դիմում Բանկ Քարտի օգտագործողի տվյալների փոփոխման կամ Քարտի գործողության դադարեցման համար, Քարտը շարունակում է գործել օգտագործողի տվյալներով մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը, ընդ որում նշված պարագայում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտով իրականացվող գործառնությունների, դրանց արդյունքում Իրավաբանական անձ Հաճախորդին պատճառված վնասների կամ կորուստների առաջացման համար:

Այն դեպքում, երբ նոր տնօրենը դիմում է Բանկ Քարտի օգտագործողի տվյալները փոփոխելու կամ Քարտի գործողությունը դադարեցնելու նպատակով, գործող Քարտը փակվում է Բանկ ներկայացված Քարտի փակման հայտի հիման վրա՝ ըստ առկայության Բանկի նկատմամբ Քարտի գծով առկա բոլոր պարտավորությունները մարելուց հետո: Նոր տնօրենի անունով Քարտ թողարկվում է Բանկ ներկայացված նոր Քարտի տրամադրման հայտի հիման վրա:

Նոր տնօրենը կարող է իրականացնել վերոնշյալ գործառույթները նաև այն դեպքում, երբ Քարտի օգտագործող է հանդիսանում Իրավաբանական անձ Հաճախորդի այլ աշխատակից:

5. Բանկային ավանդներ

5.1. Սույն բաժնի դրույթները կարգավորում են ավանդների ներգրավման կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև ծագող պայմանագրային հարաբերությունները: Սույն Հիմնական պայմանների հետ մեկտեղ բանկային ավանդի պայմանագրի անբաժանելի մասն են կազմում նաև Սակագները, Դիմումները, ինչպես նաև տվյալ տեսակի ավանդի հատուկ պայմանները սահմանող, Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը (այսուհետ՝ Ավանդի պայմանագիր):

5.2. Ավանդն ընդունելիս այն մուտքագրվում է այդ նպատակով բացված ավանդային հաշվին (այսուհետ՝ Ավանդային հաշիվ): Ավանդային հաշիվները վարվում են ընթացիկ և այլ բանկային հաշիվներից առանձին և դրանց նկատմամբ տարածվում են Հաշիվների վերաբերյալ Հիմնական պայմանների դրույթները: Եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից, Ավանդային հաշվի սպասարկումն իրականացվում է Բանկի Կենտրոնական գործառնական ստորաբաժանման կամ Բանկի այն մասնաճյուղի տարածքում, որտեղ բացվել է Ավանդային հաշիվը:

5.3. Ավանդի պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ավանդի պայմանագրի ստորագրման պահից 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում ավանդի՝ Հաճախորդի Ավանդային հաշվին ամբողջությամբ ներդրման պահից: Ավանդի ամբողջությամբ ներդրման փաստը հավաստվում է Բանկի կողմից Հաճախորդին տրված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձևի և Բանկի կողմից պատշաճ վավերացված դրամարկղի մուտքի անդորրագրով՝ կանխիկ մուծելու դեպքում կամ Ավանդային հաշվի քաղվածքով՝ ավանդն անկանխիկ մուծելու դեպքում (ներառյալ՝ Համակարգերի միջոցով Ավանդի պայմանագիր կնքելու դեպքերում):

5.4. Համալրման հնարավորությամբ Ավանդային հաշվին Հաճախորդի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա Ավանդային հաշվի հաշվեհամարի նշումով, եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից:

5.5. Բանկը Հաճախորդին ավանդի դիմաց տոկոսներ է վճարում Սակագներով և տվյալ ավանդի պայմաններով նախատեսված կարգով և չափով: Սակագներով սահմանված տոկոսը, անկախ ավանդի արժույթից, հաշվարկվում և վճարվում է ՀՀ դրամով՝ Բանկի կողմից որոշված փոխարժեքով: Հաճախորդի գրավոր հանձնարարականի առկայության դեպքում վճարման ենթակա տոկոսը կարող է փոխարկվել ավանդի արժույթին և այդ արժույթով վճարվել Հաճախորդին: Տոկոսի փոխարկումը ավանդի արժույթին իրականացվում է այդ պահին Բանկի կողմից որոշված փոխարժեքով:

5.6. Ավանդները կարող են ներդրվել Ավանդի պայմանագրում նշված երրորդ անձանց անունով՝ այդ անձանց Բանկի կողմից բավարար համարվող եղանակով նախապես նույնականացնելու պայմանով: Բանկը կարող է հրաժարվել հօգուտ երրորդ անձանց Ավանդի պայմանագրեր կնքելուց, եթե հիմքեր կան կասկածելու գործարքի օրինականության վերաբերյալ, կամ հնարավոր չէ պատշաճ կարգով նույնականացնել երրորդ անձանց: Նման երրորդ անձը Հաճախորդի իրավունքներ ձեռք է բերում Բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ

պահանջը ներկայացնելու կամ այդ իրավունքներից օգտվելու իր մտադրության վերաբերյալ որևէ այլ եղանակով Բանկին տեղեկացնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Ավանդի պայմանագրով:

5.7. Ավանդի (ներառյալ՝ գործող ավանդի գումարի հետագա համալրումների) դիմաց տոկոսները հաշվեգրվում են ավանդի փաստացի ներդրման օրվանից մինչև Հաճախորդի Ավանդային հաշվից դուրս գրելու օրվան նախորդող օրը ներառյալ ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

5.8. Տոկոսները հաշվարկվում են Ավանդային հաշվում առկա ամբողջ գումարի նկատմամբ, Ավանդի պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ:

5.9. Ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը ֆիզիկական անձ Հաճախորդը ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Օրենքով չարգելված դեպքերում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ այդ մասին համաձայնեցված եղանակով ծանուցելով Հաճախորդին: Տոկոսադրույքի փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի նախքան փոփոխված տոկոսադրույքի ուժի մեջ մտնելը պահանջել վերադարձնել ավանդը և վճարել վերադարձման պահի դրությամբ ավանդի դիմաց սահմանված չափով հաշվարկված տոկոսները:

5.10. Ավանդին հաշվեգրված տոկոսը Հաճախորդին վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ֆիզիկական անձ Հաճախորդի հարկային գործակալ՝ օրենքով սահմանված չափով և կարգով գանձելով և պետական բյուջե փոխանցելով սահմանված հարկերը: Բանկը պարտավոր չէ ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջելու և նման այլ դեպքերում ետ ստանալ Հաճախորդից ավել գանձված հարկերի գումարը կամ այն վերադարձնել Հաճախորդին:

5.11. Ավանդի ժամկետը լրանալու օրը ավանդի վերադարձման պահանջ չներկայացնելու դեպքում ավանդի ժամկետը կարող է երկարաձգվել տվյալ պահին նույն տեսակի ավանդների համար Բանկում գործող պայմաններով՝ ավանդին գումարելով (կամ առանց գումարելու) տվյալ պահին հաշվարկված և չվճարված տոկոսները (ավանդի արժույթից տարբեր արժույթի դեպքում փոխարկելով ավանդի արժույթին՝ այդ պահին Բանկի կողմից որոշված փոխարժեքով): Եթե ավանդի ժամկետը լրանալու օրը Բանկը նույն տեսակի ավանդ այլևս չի առաջարկում, ապա

ավանդի ժամկետը սույն կետին համապատասխան կարող է երկարաձգվել Բանկի կողմից սահմանված այլ ավանդի պայմաններին համապատասխան:

5.12. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Ավանդի պայմանագիրը (ավանդը կամ դրա մի մասը Ավանդի պայմանագրում սահմանված ժամկետից շուտ պահանջել), բացառությամբ իրավաբանական անձ Հաճախորդների, որոնք կարող են Ավանդի պայմանագիրը լուծել միայն Բանկի համաձայնությամբ, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ: Ավանդի պայմանագրի վաղաժամկետ դադարման (լրիվ կամ մասնակի) դեպքում Բանկը Սակագներով սահմանված կարգով կարող է Հաճախորդից գանձել տուգանք, հաշվի բացման և/կամ դրամական միջոցների կանխիկացման և/կամ հաշվին կանխիկ մուտքագրման վճարներ, իրականացնել տոկոսների վերահաշվարկ, ինչը կարող է հանգեցնել տարեկան տոկոսային եկամտաբերության նվազման: Ընդ որում, եթե Հաճախորդին փաստացի վճարված տոկոսը գերազանցում է նման վերահաշվարկի արդյունքում ստացված տոկոսը, Բանկը կարող է իրականացնել Հիմնական պայմանների 1.15 կետով սահմանված իր իրավունքը:

5.13. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Ավանդի պայմանագիրը՝ այդ մասին համաձայնեցված եղանակով ծանուցելով Հաճախորդին՝ վերջինիս վերադարձնելով ավանդը և վճարելով վերադարձման պահի դրությամբ հաշվարկված և չվճարված տոկոսները:

5.14. Ավանդի պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրության համաձայն իրավասու մարմինների պահանջով ավանդի գումարի վրա բռնագանձում տարածելու կամ այլ կերպ ավանդի գումարն Ավանդային հաշվից ելքագրելու Բանկի համար պարտադիր պահանջ ստացվելու դեպքերում:

5.15. Ավանդի պայմանագրի դադարման դեպքում Ավանդային հաշվին առկա միջոցները փոխանցվում են Հաճախորդի ընթացիկ հաշվին, իսկ հօգուտ երրորդ անձի բացված ավանդների դեպքում՝ վերջինիս ընթացիկ հաշվին, եթե երրորդ անձը նախքան Ավանդի պայմանագրի դադարումն արտահայտել է Հաճախորդի (որպես ավանդատու) իրավունքներից օգտվելու իր մտադրությունը, եթե այլ բան համաձայնեցված չէ Հաճախորդի և Բանկի միջև կամ սահմանված չէ Բանկի կողմից:

6. Գաղտնիություն

6.1. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Բանկը սույն Հիմնական պայմաններով սահմանված կարգով մշակի, այդ թվում՝ հավաքագրի, օգտագործի և տրամադրի Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները: Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները Բանկը կարող է հավաքագրել անմիջապես Հաճախորդից և/կամ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներից, օրենքով չարգելված եղանակներով: Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները մշակվելու և օգտագործվելու են Բանկի Համապատասխանության պարտավորությունները կատարելու նպատակով: Հաճախորդը հաստատում է, որ Կապակցված անձինք, ում մասին տեղեկությունները սույն Հիմնական պայմաններով սահմանված կարգով տրամադրվել կամ հայտի են դարձել Բանկին, տեղեկացված և համաձայն են, որպեսզի այդ տեղեկությունները մշակվեն, այդ թվում՝ օգտագործվեն և տրամադրվեն Բանկի կողմից սույն Հիմնական պայմաններով սահմանված կարգով և պարտավորվում է Բանկին զերծ պահել վերջիններիս կողմից ներկայացված պահանջներից, հայցերից և պատասխանատվությունից:

6.2. Հաճախորդը պարտավորվում է համագործակցել և օժանդակել Բանկին վերջինիս կողմից Համապատասխանության պարտավորությունների կատարման ընթացքում, այդ թվում՝ պարտավորվում է Բանկի պահանջը ստանալու պահից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կամ Բանկի ողջամիտ պահանջով՝ ավելի կարճ ժամկետներում վերջինիս տրամադրել Բանկի կողմից պահանջվող Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև Բանկին ներկայացնել պահանջվող տեղեկությունները հավաստող փաստաթղթերը, այդ թվում՝ Հարկային տեղեկությունները, Հարկային հավաստման ձևերը, Անհատական տվյալները:

6.3. Բանկը պարտավորվում է ապահովել Հաճախորդի կողմից տրամադրած և/կամ Հիմնական պայմաններով սահմանված կարգով հավաքագրված Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ սույն կետով և Հիմնական պայմանների այլ կետերով սահմանված դեպքերի: Բանկն իրավունք ունի Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ Բանկային գաղտնիքը տրամադրել (հրապարակել) այլ անձանց, այդ թվում՝ ՀՀ Լիազոր անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Միևնույն ժամանակ, Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Բանկը Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները տրամադրի (հրապարակի) օտարերկրյա Լիազոր մարմիններին, եթե դա անհրաժեշտ է Բանկի կողմից Համապատասխանության պարտավորությունների կատարման համար: Ընդ որում, եթե Բանկը, սույն կետով

սահմանված դեպքերում, պարտավոր է տրամադրել կամ հրապարակել Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները, Բանկը պարտավոր է տեղեկություններ տրամադրել միայն անհրաժեշտ ծավալով և դրա համար լիազորված անձանց: Վերոհիշյալ կարգով Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման փաստը Հաճախորդի, նրա գործընկերների և երրորդ անձանց կողմից չի կարող Բանկին, նրա աշխատակցին, ներկայացուցչին կամ գործակալին ներկայացված վնասների հատուցման պահանջը բավարարելու հիմք հանդիսանալ: Կողմերը համաձայնվում են, որ սույն կետով սահմանված նորմերը շարունակում են գործել Դիմում/Պայմանագրի լուծումից և Հաշվի փակումից հետո՝ անորոշ ժամկետով:

6.4. Բանկն իրավունք ունի հարկային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հաճախորդի Հաշիվների նկատմամբ կիրառել սահմանափակում (արգելադրում) և(կամ) արգելափակել Հաշվով գործառնությունների կատարումը: Այդ կապակցությամբ Բանկն իրավունք ունի մերժել Հաշվում առկա միջոցները տնօրինելու և Հաշվով գործառնություններ կատարելու՝ Հաճախորդի և երրորդ անձանց կողմից ներկայացված բոլոր հանձնարարականները, ինչպես նաև Լիազոր մարմնի և(կամ) վերջինիս կողմից նշված անձի օրինական պահանջի առկայության դեպքում համապատասխան դրամական միջոցները՝ անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարությունների, գանձել Հաճախորդի Հաշիվներից և փոխանցել Լիազոր մարմնին և(կամ) վերջինիս կողմից նշված անձին: Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ ինքն է պատասխանատու Բանկի կողմից իրեն որևէ ծառայության մատուցման, այդ թվում՝ Հաշվի բացման, սպասարկման և/կամ օգտագործման հետևանքով օտարերկրյա պետություններում առաջացող իր հարկային պարտավորությունները (ներառյալ՝ հարկերի վճարման կամ հարկային հաշվետվությունների կամ այլ փաստաթղթերի տրամադրման պարտավորությունները) հասկանալու և կատարելու համար:

6.5. Հաճախորդի կողմից Հաշվի հետ կապված ՀՀ օրենսդրությամբ և/կամ Հիմնական պայմաններով և/կամ ուղեցույցերով և/կամ Բանկի կողմից հաստատված Սակագներով և/կամ Կողմերի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, այդ թվում՝ Հիմնական պայմաններով սահմանված Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները Հիմնական պայմաններով սահմանված կարգով Բանկին չտրամադրելու և/կամ Համապատասխանության պարտավորությունների կատարման ընթացքում Բանկի հետ չհամագործակցելու և/կամ Համապատասխանության պարտականությունների կատարման համար անհրաժեշտ՝ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման և/կամ տրամադրման անհնարինության դեպքում (ներառյալ՝ այն

դեպքերում, երբ Հաճախորդը չի տրամադրում որևէ համաձայնություն, որն անհրաժեշտ է Բանկին Համապատասխանության պարտավորությունների կատարման համար, այդ թվում՝ Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների մշակման և/կամ օգտագործման և/կամ տրամադրման (հրապարակման) համաձայնությունը) Բանկն իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Հաճախորդի հետ կնքված պայմանագիրը (պայմանագրերը)՝ ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ ծանուցելով Հաճախորդին:

6.6. Հիմնական պայմաններով սահմանված Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ Հարկային տեղեկությունները, Հարկային հաստատման ձևերը սույն Հիմնական պայմաններով սահմանված կարգով Բանկին չտրամադրվելու և/կամ Համապատասխանության պարտավորությունների կատարման ընթացքում Բանկի հետ չհամագործակցելու դեպքում, Բանկն իրավունք ունի ինքնուրույն որոշում կայացնել Հաճախորդի հարկային կարգավիճակի մասին, Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները տրամադրել օտարերկրյա Լիազոր մարմնին, ինչպես նաև օտարերկրյա Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով և չափով առանց Հաճախորդի կարգադրության Հաճախորդի Հաշվից դուրս գրել օտարերկյա աղբյուրներից ստացված գումարները և դրանք փոխանցել օտարերկրյա Լիազոր մարմնին:

6.7. Հաճախորդի կողմից Հիմնական պայմաններով ստանձնած պարտավորությունները խախտելը կարող է հիմք հանդիսանալ վերջինիս կողմից օրենքի ուժով, այդ թվում՝ օտարերկրյա երկրների օրենսդրությամբ ստանձնած հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած այլ մարմինների և անձանց կողմից՝ բանկային համակարգի միջոցով կատարվող գործարքների դեպքում, Հաճախորդի դրամական միջոցներից գանձումներ և վճարումներ կատարելու համար:

6.8. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, այլ իրավական ակտերի, Բանկի գործունեության սկզբունքների և ներքին իրավական ակտերի համաձայն հանցավոր ճանապարհով ստացված միջոցների շրջանառությունն արգելվում է: Հաճախորդը հավաստիացնում է, որ իր Հաշիվներն օգտագործվում են բացառապես օրինական նպատակով, դրանցով շրջանառվում են բացառապես օրինական ճանապարհով ձեռք բերված միջոցներ, որոնք կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կամ այլ հակահիրավական արարքի հետ:

6.9. Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում Բանկն իրավասու է կասեցնել, մերժել կամ դադարեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ վերջինիս բացահայտման և կանխման ուղղությամբ:

6.10. Հաշվով կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց (այդ թվում՝ նաև մերժել Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը), եթե Բանկի կարծիքով գործարքների իրավաչափությունը և նպատակը հիմնավորող բավարար ապացուցներ չեն ներկայացվում:

6.11. Բանկն իրավունք ունի Հաճախորդի և/կամ Հաճախորդի գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել երրորդ անձ հանդիսացող կազմակերպություններին (այդ թվում օտարերկրյա կազմակերպություններին), որոնք որևէ կերպ կապված են Հաճախորդի կողմից Բանկի միջոցով և/կամ Բանկի ուղղակի կամ անուղղակի ներգավմամբ իրականացվող գործարքների և գործառնությունների սպասարկման և/կամ կատարման հետ, դրանք են՝ միջազգային դրամային փոխանցումների իրականացման ժամանակ ներգրավված թղթակից բանկերը, վճարահաշվարկային կազմակերպությունները (MasterCard, VISA, SWIFT և այլն), որոնք իրենց կողմից իրականացվող գործունեության բնույթով պետք է տեղեկացված լինեն իրականացվող գործառնության մանրամասների վերաբերյալ:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Հաճախորդը Բանկի առջև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Բանկի առջև ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված բոլոր վնասների (ներառյալ բաց թողնված օգուտը) համար՝ անկախ մեղքի առկայությունից:

7.2. Հաճախորդը պարտավորվում է Բանկին զերծ պահել Հաճախորդի և վերջինիս կողմից երրորդ անձանց հետ կնքված գործարքներից բխող պահանջներից, կորուստներից և վնասներից: Եթե, այնուամենայնիվ, նման պահանջ ներկայացվում է, ապա Բանկն իրավունք ունի Հաճախորդի հաշվին ձեռնարկել անհրաժեշտ միջոցները իր իրավունքների պաշտպանության համար: Այդ նպատակով Բանկն իրավունք ունի իր իրավունքների պաշտպանության նպատակով կատարած փաստաբանական, դատական և այլ ծախսերը, ինչպես նաև Բանկի կողմից կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելու հետ կապված բոլոր գումարներն անակցեպտ կարգով դուրս գրել հաճախորդի Հաշիվներից:

7.3. Բանկը Հաճախորդի առջև պատասխանատվություն է կրում միայն այն վնասների համար, որոնք պատճառվել են իր (աշխատողների) դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով:

7.4. Կողմերն ազատվում են ՀՀ օրենսդրությամբ և վերջինիս համապատասխան կատարված գործարքներով իրենց վերապահված իրավունքների պատշաճ իրականացման հետևանքով մյուս կողմի կրած կորուստների և վնասների համար պատասխանատվությունից:

7.5. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի այն վնասների համար, որոնք պատճառվել են ծառայությունների մատուցմանը մասնակցող երրորդ անձանց՝ ներառյալ էլեկտրամատակարարման և/կամ կապի կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, համակարգի օպերատորների, միջնորդ բանկերի և այլ անձանց գործողությունների հետևանքով:

7.6. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի այն վնասների համար, որոնք ծագել են Հաճախորդի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման կամ իրավունքների չարաշահման հետևանքով:

7.7. Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային ծառայությունների մատուցումից բխող իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, եթե պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Անհաղթահարելի ուժի ծագման դեպքում Բանկն իրավասու է կասեցնել համապատասխան ծառայությունների մատուցումը մինչև անհաղթահարելի ուժի դադարելը:

7.8. Բանկը պատասխանատվություն չի կրում միջազգային փոխանցումների իրականացման դեպքում այլ պետությունների և դրանց իրավասու մարմինների (և/կամ ի կատարումն դրանց կողմից ընդունված որոշումների թղթակից կամ միջոցների փոխանցմանը մասնակից արտասահմանյան բանկերի և/կամ վճարահաշվարկային կազմակերպությունների) կողմից սահմանված սանկցիաների և/կամ պատժամիջոցների կիրառման արդյունքում Հաճախորդի կողմից փոխանցված միջոցների արգելադրման/սառեցման համար: Այդպիսի հանգամանքների ի հայտ գալու դեպքում, Բանկի կողմից միջոցների փոխանցման հանձնարարականում նշված անձին միջոցների չփոխանցման ռիսկը կրում է Հաճախորդը և այդ հանգամանքներում միջոցների չփոխանցումը չի համարվի Բանկի կողմից վճարման հանձնարարակնի չկատարում և/կամ ոչ պատշաճ կատարում:

7.9. Ստորև նշված դեպքերում Բանկն իրավասու է մերժել (կասեցնել) Հաճախորդի կողմից գործարքի կատարումը/ Հաճախորդին բանկային ծառայությունների մատուցումը, մերժել Հաճախորդի հետ իրավահարաբերությունների

հաստատումը, դադարեցնել Հաճախորդի հետ ձևավորված իրավահարաբերությունները կամ միակողմանիորեն՝ Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով (այդ թվում՝ տվյալ պահին գործող Սակագներով) փակել Հաճախորդի հաշիվները կամ մինչև Հաճախորդի կողմից համապատասխան փաստաթղթերի համալրումը կամ պահանջների կատարումը կամ Բանկի կողմից Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ավարտը՝ ժամանակավորապես սահմանափակել այդ հաշիվներով գործառնությունները.

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրության այլ պահանջներին և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
- Բանկի օրինական պահանջները Հաճախորդի կողմից չկատարելու, այդ թվում Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չկատարելու, Հիմնական Պայմանների խախտման, Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չտրամադրելու կամ Բանկի կողմից սահմանված տիպային ձևից տարբերվող (նաև բովանդակության առումով) ցանկացած այլ ձևի փաստաթղթով ներկայացնելու դեպքում, ինչպես նաև Հիմնական Պայմաններով, Սակագներով, առանձին ծառայության պայմաններով նախատեսված դեպքերում:

Ընդ որում, Բանկի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

7.10. ՀՀ օրենսդրության պահանջների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային և օտարերկրյա պատժամիջոցների հիման վրա, Բանկի միակողմանի ստանձնած պարտավորությունների արդյունքում, Բանկի թղթակից բանկերի պահանջով կամ Բանկի իրավասու մարմնի որոշմամբ՝ Բանկը կարող է սահմանափակումներ կամ արգելքներ սահմանել և կիրառել որոշակի երկրի քաղաքացիություն (գրանցում) կամ ռեզիդենտություն ունեցող և/կամ առանձին խմբի դասվող անձանց նկատմամբ: Նման սահմանափակումների արդյունքում կարող են ինչպես արգելվել հաշիվների սպասարկումն ու Հաճախորդի հետ համագործակցությունն ընդհանրապես, այնպես էլ կարող են կիրառվել առանձին ծառայությունների գծով սահմանափակումներ (օրինակ՝ միջազգային վճարային քարտերի տրամադրման/սպասարկման արգելք, արտարժութային հաշիվներով միջազգային փոխանցումների կատարման և/կամ ստացման արգելք և այլն):

7.11. Հաճախորդի կողմից սույն Հիմնական պայմանների որևէ դրույթի կամ պայմանի խախտման կամ Բանկի մոտ Հաճախորդի կողմից Հիմնական պայմանների որևէ դրույթի կամ պայմանի խախտման կասկածի առաջացման դեպքում, Բանկն իրավունքի ունի կասեցնել և/կամ դադարեցնել Հաճախորդին բոլոր բանկային ծառայությունների կամ որոշ բանկային ծառայությունների մատուցումը և փակել Հաճախորդի հաշիվները Բանկում:

7.12. Հաճախորդի կամ նրա հետ փոխկապակցված ցանկացած անձի նկատմամբ քրեական վարույթ նախաձեռնվելու դեպքում Բանկն իրավունք ունի իր կողմից սահմանված ժամկետով կամ անժամկետ կասեցնելու Հաճախորդի հետ (նրա հետ փոխկապակցված ցանկացած անձի) հետ գործարար հարաբերությունները կամ դադարեցելու և/կամ սահմանափակելու գործարար հարաբերությունները և/կամ որոշ գործարքների կատարումը և/կամ փակելու Հաճախորդի և/կամ նրա հետ փոխկապակցված ցանկացած անձանց հաշիվները:

8. Այլ պայմաններ

8.1. Բանկն իրավունք ունի իր և Հաճախորդի միջև կնքված համաձայնություններից բխող իր իրավունքները (պահանջը) այլ անձանց փոխանցել (զիջել) առանց Հաճախորդի համաձայնության:

8.2. Հաճախորդն իրավունք ունի իր և Բանկի միջև կնքված համաձայնություններից բխող իր իրավունքները (պահանջը) այլ անձանց փոխանցել (զիջել) միայն Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:

8.3. Հաճախորդի մահվան կամ իրավաբանական անձ Հաճախորդի վերակազմակերպման, Բանկի վերակազմակերպման դեպքում նրանց իրավունքները և պարտականություններն համապարփակ իրավահաջորդության կարգով անցնում են նրանց իրավահաջորդին:

8.4. Իրավահաջորդության դեպքում Բանկի մոտ ծագում է Հաճախորդի հետ կնքված համաձայնությունների միակողմ վաղաժամկետ դադարեցման իրավունք:

8.5. Բանկի և Հաճախորդի միջև Հիմնական պայմանների հիման վրա ծագող հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.6. Կողմերի միջև կնքված համաձայնությունների կապակցությամբ ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ փոխշահավետ համաձայնության չհանգելու դեպքում՝ դատական կարգով:

8.7. Վեճերի դատական կարգով քննության դեպքում Կողմերը տալիս են իրենց համաձանությունը՝ գործով արագացված դատաքննության կիրառման համար:

8.8. Վեճերը կարող են հանձնվել նաև ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Սույն Հիմնական պայմաններով Հաճախորդը տեղեկացվում է, որ Բանկը կնքել է ֆինասկական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր, որով հրաժարվել է գույքային պահանջի չափը 250.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը 500.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող պահանջներով ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացրած որոշումները դատական կարգով վիճարկելու իրավունքից:

8.9. Հիմնական պայմանները և կից մյուս փաստաթղթերը կազմվում են հայերեն, որոնք գերակա են այլ լեզուներով օրինակների նկատմամբ՝ վերջիններիս առկայության դեպքում:

9. Փոփոխությունների պատմություն

Տարբերակ	Ամսաթիվ	Հաստատող մարմին	Որոշման համար	Փոփոխությունների նկարագիրը
Խմբագրություն 07	05.05.2021թ., ուժի մեջ է 07.05.2021թ.-ից	Տնօրինություն	18	Փոփոխվել է Հավելված 3-ը՝ համաձայն Կանոնակարգ 8/04-ի փոփոխության

Հավելված 1

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ,

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը** (այսուհետ՝ Հիմնադրամ):

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, 0010,

Հեռախոսը՝ +374 10 583514,

Ինտերնետային կայքը՝ www.adgf.am:

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է

Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**16 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	**7 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

ԲԱՑԻ ԱՅԴ, ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՉԵՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրված ավանդի նկատմամբ հաշվարկվում է Տարեկան պարզ տոկոսադրույք և APY-Էյ-Փի-Ուայ ((Annual Percentage Yield կամ APY, այսուհետ՝ APY)՝ տարեկան տոկոսային եկամտաբերություն:

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԶ (ԱՆՎԱՆԱԿԱՆ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ (ANNUAL RATE OF SIMPLE INTEREST) ՏԱՐԵԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆ Է, ՈՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԲԱՆԿԸ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ Է ԱՎԱՆԴԱՏՈՒԻՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ և ՈՐԸ ՎՃԱՐՎՈՒՄ Է ՏՈԿՈՍՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԱՑՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ: ԸՆԴ ՈՐՈՒՄ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԶ (ԱՆՎԱՆԱԿԱՆ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ:

Դիցուք, եթե տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույքի չափը 7% է, ներդրված ավանդի (հաշվում առկա միջոցների) չափը՝ 100,000 ՀՀ դրամ, ապա պայմանագրով վճարվող տոկոսները մեկ տարվա համար կհաշվարկեն հետևալ կերպ. (100,000 ՀՀ դրամ) * 0.07% = 7,000 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

ՄԻՆՉԴԵՌ APY-Ը ԱՅՆ ՏՈԿՈՍՆ Է, ՈՐՆ ԱՆՁԸ ԿՍՏԱՆԱ 1000 ԴՐԱՄ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ 365-ՕՐՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԶ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ, ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ (ԿԱՊԻՏԱԼԱՑՄԱՆ (COMPOUNDING)), ՎՃԱՐՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$\mathbf{A} = \sum_{n=1}^{N} \frac{\mathbf{K}_n}{(1+APY)^{\frac{Dn}{365}}} \qquad (1)$$

որտեղ՝

1) A - ավանդի սկզբնական գումարն է:

2) n -ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:

3) N -ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:

4) Kn-ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:

5) Dn- այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:

Դիցուք. ներդրված է ժամկետային ավանդ՝ ավանդի ներդրման պահին միանվագ պարտադիր վճարներով, մասնավորապես.

1) ա. Ավանդի չափ՝ 100 000 դրամ

բ. Ավանդի գործողության ժամկետ՝ 1 տարի (365 օր)

գ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 7%

դ. Տոկոսագումարների վճարումները՝ ավանդի գործողության ժամկետի վերջում

ե. Ավանդատուի կողմից ավանդի ստացման օրը կատարվող պարտադիր վճարներ՝ Ավանդային հաշվի սպասարկման պարտադիր վճար՝ 1000 դրամ

2) Այս դեպքում կստանանք ավանդի դիմաց տոկոսագումարների վճարումների հետևյալ գրաֆիկը՝

Ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարը՝ n	Ավանդի ներդրման օրից մինչև հերթական տոկոսագումարի վճարումն ընկած օրերի թիվը՝ Dn	Պարտադիր վճարներ	Վճարվող տոկոսա-գումարներ	Ներդրված ավանդի գումարի վճարումներ	Ավանդի դիմաց հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	**-1000**			-1000
2	365		7000	100000	107000
Ընդամենը		-1000	7000	100000	106000

3) Ավանդային պայմանագրի գործողության վերջում վճարվող տոկոսագումարը ստացվում է՝

k2 = 100000 * 0.07 = 7000 դրամ

4) Ունենալով բոլոր անհրաժեշտ մեծությունները և օգտվելով թիվ 1 բանաձևից՝ կստանանք տարեկան տոկոսային եկամտաբերության չափը՝

$$100000 = \frac{-1000}{(1+APY)^{\frac{0}{365}}} \ldots + \frac{107000}{(1+APY)^{\frac{365}{365}}}$$

$$101000=\frac{107000}{(1+APY)^{\frac{365}{365}}}$$, որտեղից

APY=0.059406*100=5.94%

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը տոկոսագումարների կանոնավոր կապիտալացումների դեպքում հնարավոր է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$APY=(1+r/n)^{n}-1, \quad (2)$$

որտեղ՝

1) APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

2) r - տարեկան պարզ տոկոսադրույքն է:

3) n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Դիցուք. ներդրված է ժամկետային ավանդ՝ տոկոսագումարների ամսական կապիտալացմամբ:

1) ա. Ավանդի գործողության ժամկետ՝ 1 տարի (365 օր)

բ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 7%

գ. Տոկոսների կապիտալացումների հաճախականությունը ամսական՝ տարվա ընթացքում 12 անգամ, յուրաքանչյուր ամսվա ժամանակահատվածի վերջում:

2) Ելնելով վերոնշյալ օրինակի պայմաններից և օգտվելով թիվ 2 բանաձևից՝ կստանանք տարեկան տոկոսային եկամտաբերության չափը.

APY = (1 + 0.07/12)12 - 1, որտեղից՝

APY = 0.072290 * 100 = 7.23%:

Հավելված 3

«ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ» ՁԵՎԱԹՈՒՂԹ

INECOBANK

1 ԾԱՆՈԹԱՑԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ

2 ՊՐՄԵՔ

10 օր անց

3 ԾԱՆՈԹԱՑԵՔ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

Բավարարված չեք

4 ՊՐՄԵՔ

Կարևոր իրավիճակում

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ

Կազմակերպության տրաքանցիոն աշխատակից պարտադիր է.

- Ձեզ **ապահովել** բոլորների հասկով զբաղվող աշխատակցի մոտ:
- **Տրամադրել** հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե):

Դիտարկողական աշխատակիցը պարտադիր է.

- **Տեղեկացնել** Ձեր իրավունքների և բողոքի ընթացքի գործընթացի մասին:
- **Տրամադրել** կազմակերպությունում գործող հանձնարարական կանոնները և Ձայնի ՀԾ:

(ՊԱՐՏԱԴԻՐ ՔԱՅԼԵՐ)

Գրավոր բողոք ներկայացրեք պատասխանատու աշխատակցին կամ ուղարկեք հետևյալ հասցեներով.

customer.care@inecobank.am

0001, ՀՀ, ք. Երևան, Մուսինյան փ. 17

Ներկայացնելով հանձնարարական հայտ՝

կացի «Ծառայող կապ» բաժնից

Ձեր բողոքը կարող եք ներկայացնել նաև Ֆինանսական հանձնակոմի հաշտարարի միջոցով:

- **Նշեք** Ձեր տվյալները՝ պատասխանը ստանալու համար:
- **Հավաստիացեք**, որ Ձեր բողոքն ընդունվել են և **պահպանեք** ստացման փաստը հաստատող տեղեկատվությունը մինչև բողոքի վերջնական լուծումը:

Կազմակերպությունը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մերժել բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հարցեր ունենալու դեպքում կապվեք պատասխանատուի հետ.

(374 10) 510-510

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՀԱՍԵՑՄԱՐԴԻՆ, երբ.

- Ֆիզիկական անձ եք, միկրոձեռնարկատեր հանդիսացող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում նաև՝ երաշխավոր, գրավատու կամ այլ անձ ով ապահովման միջոցի (գրավի՝ գրաքի) հետ կապված բողոք ունի,
- բողոքը վերաբերում է ծառայության ծառայությանը և ունեք գրավոր պահանջ (մինչև 10 մլն դրամ), կամ բողոքը առնչվում է վարկային պարտությանը,
- 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չեք ստացել կամ պատասխանը Ձեզ չի բավարարում,
- բողոքը չի քննվում դատարանում կամ արբիտրաժային արիտրաժում կամ Ֆինանսական հանձնակոմի հաշտարարի կողմից.
- պատասխանից հետո չի անցել 6 ամիս,
- բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից հետո:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԵՆ

(Երևան 0010, Ս. Խորենացի 15, Էլիտ պլազա բիզնես կենտրոն, 7-րդ հարկ, +374 60 701 111, info@fcm.am)

Դիտարկողական աշխատակիցը պարտադիր է.

- **Տեղեկացնել** Ձեր իրավունքների և բողոքի ընթացքի գործընթացի մասին:
- **Տրամադրել** կազմակերպությունում գործող հանձնարարական կանոնները և Ձայնի ՀԾ:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

- եթե Ձեր և կազմակերպության միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, ապա Ձեր մինչև ծագող վեճերը ենթակա են բանեցնել արբիտրաժային տribունալի կողմից:
- Պայմանագիր կնքելիս Դուք իրավունք ունեք հրաժարվելու արբիտրաժային համաձայնագրից և կազմակերպությունը պարտադիր է Ձեզ ծառայություն մատուցել:
- Հիշեք. նույնիսկ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Դուք կարող եք դիմել Ֆինանսական հանձնակոմի հաշտարարին, քանի դեռ բողոքը չի քննվել արբիտրաժում:
- Հաշտարարը իրավասու չէ ընդունել բողոքը, եթե այն արդեն քննվում է արբիտրաժում:

ԴԱՏԱՐԱՆ

- Դուք միշտ կարող եք դիմել դատարան:
- Դատարանի վճիռը ենթակա չէ վերանայման Ֆինանսական հանձնակոմի հաշտարարի կողմից:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

- Դուք կարող եք նաև դիմել Կենտրոնական բանկ, և Ձեր բողոքին կպատասխանեն 15 աշխատանքային օրվա ընթացքում (Երևան 0010, Վ. Սարգսյան 6, +374 592 607, consumerinfo@cba.am):
- եթե Ձեր բողոքը այլ կառույցների իրավասության դաշտում է, ապա Կենտրոնական բանկը կուղղորդի նրանց տիրույթ: